ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ

ԵՐԿՈՐԴ ԳԻՐՔ

ՎԱՅՈՑ ՁՈՐ



ԿՀԱՄՄԻՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

Б
22.580

769
հ. 31-հ


ՀՆՈՒԹԻՒՆՔ

ՎԱՆՕՐԷԻՑ

ՎԱՅՈՑ--ՁՈՐ

ԿԱԶՄԵՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՒԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1890

ՀՐԱՏ. ՄԱՀՄԱՆԱՑ
ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏ. ՄԱՀՄԱՆԱՑ
ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


Тбил. библиотека им. Шаумяна

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԱՔԱՐԱՅ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՉՆՈՒԱՄԵԾԱՐ Պ. ԱՂԻՔՍԱՆԴՐ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆՑԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՕՐ,

Ազնուատոհմ ԱՂԱ ԱՒԵՏԻՍԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆՑԻ *Ազուկցոյ.*

ԱՆՈՒՆԴ ԵՒ ՅԱՋԱՏՈՒԹԻՒՆ ԾՈՒԽՐՈՒՄ Է ԱՋԱԿՑՈՒՏԻՒՆԴ *հայ յուսալիարդ*
ԱՐՔԵՆԱԲՈՒՆԱԲԱՀ ՅԱՐԳԱՆՈՑ

ԱՐՁԱՆԱՊԱՏՈՒՄ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ
№ _____
ՊԱՀՊԱՆՎԱԾ Է ՕՐԵՆՔՈՎ

1890· 27 *յուլիս*
Վաղարշապատ:

Ընդհանուր բաժնի վարիչ
Հ. Մուրադյան
Երևան

ԱՋՆՈՒԱՏՈՒՄ ՏԷՐ

ՊԱՐՈՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

յՈՒԳՈՒԼԻ

Ինձ համար բոլորովին անակնկալ Ձեր գնահատութիւնը եւ առատասխրտ օժանդակութեանը մեզ խրախուսեցին, մեր տաժանելի ձեռնարկութեան մէջ, որ յանդգնել ենք սկսնել, հաստատուց իմ մէջ այն համոզմունքը եւ այն յոյսը ազգիս բարիքաց եւ կարող հայրենասիրաց վերայ, որ ես տածում էի: Թուք Պետ. Տէր, հաստատուցիք ինձ ունեցածս համարող եւ յուսոյ մէջ. ես ցայժմ հանգերծութեանը եւ ամեն տեսակ դժուարութիւնները ու նեղութիւնները յանձն առնելով, որ եւ անտրտունջ առաջ էի տանում-սկսած գործս, երբէք չյուսահատութեամբ, այլ ընդ հակառակն ուրախութիւն զգալով, եթէ որ իմ կազմած տետրակներն տարածում էին հնարաւոր հայրենասէրների շրջանում:

Դուք Ազնուատոհմ Տէր, այսօր իմ ուրախութիւնը կրկնապատկում էք Ձեր ինձ հասուցած օժանդակութեանը, եւ կարծես կամենում էք առաջինը լինել իբրեւ նպաստող մի այսպիսի գործի, որով պատճառ էք լինում գործիս շարունակութեանը:

Մեծապատիւ Տէր, ինձ նման մի վատասկատր եւ անոյժ անձնաւորութիւնից, որից ոչ այլ ինչ կարող էք առանալ, բացի իմ անկեղծ երախտագիտական զգացմունքից, որ ունիմ առ Ձեզ, եւ որոյ չնչին նշանը թող լինի առաջին երկու գրքերս,

ԳՐԱԴԱՐԱՆ ՍԵՓԱԿԱՆԻՆ
№
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

որ դրկում եմ Ձեզ, յայտնելով միանգամայն, որ դուք եղաք պատճառ սոյն վայոց ձորում գտնուած հայրենեաց հիւթասլուերի 20 հիւթարից բաղկացած — երրորդ գրքիս լոյս տեսնելուն, որ յիրաւի արժանի է Ձեր ազնուատոհմ հանգուցեալ ՀՕՐ անմոռանալի

անուան եւ յիշատակին հուիրելու, կ յուսամ որ ընդունիք:

Մնամ խ. ծ. Ձեր
ԼԻՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

1890 *ամի 27 Յունիսի*
Վաղարշապատ:



առաւօտուել, նշանակում է, երբ որ մարդս իւր ցանկութիւնները գոնէ մասամբ կատարած է տեսնում։ Նոյնը այսօր պատահում է և ինձ։ Ես մի գործի ձեռնարկեցի, որոյ ինչ աստիճանի դժուար և մեծածախս լինելը միայն հակառողներին է յայտնի։ Ես մասին մինչև ցայժմ ամենևին չեմ գանգատուել և չեմ էլ գանգատուելու. ինչու որ ձեռնարկած դժուարին գործս համարել եմ բարոյական պարտականութիւն և ջերմապին ցանկութիւնն իբրև ազգի մի զաւակ Ազգին դէթ մասամբ մի ծառայութիւն մատուցանելու, իմ հաւաքելով հնութեանց տուրբ նշխարները, հոյակապ տաճարներն եմ ասում, որոնք մեծն Հայաստանի նշանաւոր տեղերում և աննշան խորքերում ցայսօր գտնվում են և դեռ ևս չեն անհետացել, և որոնք դժբաղդաբար թողնուած են մեծ մասամբ անխնամ և անտերունչ դրութեան մէջ, մինչդեռ մեր հայ ազգի պարծանքն են համարվում։

Ինչպես I. և II. գրքերում ասել եմ թանկագին շինութիւններն ու նորանց նշխարները «մեծ մասամբ հաւաքած եմ». արդէն այսօր առանց քաշուելու հրապարակ դուրս գալով, համարձակվում եմ ասել, որ բոլորովին վերջացրած եմ, իմ ոյժն էլ ծանր աշխատութեանցս հետ միասին վերջացնելով։

Ա. յապէս թէ այնպէս Ա. և Ր. պըքերը, առաջինը 15՝ և երկրորդը 18 պատկերներով զարդարած կարողացանք դուրս բերել. և երբ որ մնած էի երրորդն ևս լոյս հանելու մի քանի հնաոյեր-ների հետաքրքրութեան ու բաղձանացն որչափ կարելի էր շուտ բաւարարութիւն տալու մտքով, գործիս օգտաւետութիւնը ճանաչողների համակրական նամակներն ևս աչքի առաջ ունենալով, յանկարծ ինձ օգնութիւն էլ է հասնում. Ազգուլեայ պատուաւոր հասարակութիւնից մի պատուական անձն և այն Մեծ. պ. Ղեկքասանդր Տէր Մկրտչեանն իւր առատաձեռն օժանդակութեամբ, որով գնահատելով մեր ձեռնարկութիւնը, հրամայում է ի գործ դնել այն գումարն իբր վարձատրութիւն իմ կրած նեղութեանց և կարեաց, մեծապէս քաջալերելով ինձ:

Ա. յս իրական իրախոյան պրամական օգնութեամբ ոչ միայն ուրախութիւն է պատճառում ինձ, այլ և, պահում է ցանկութիւնս, որով կը-ցանկայի հետզհետէ դուրս բերել աշխատութիւնս աւելի մաքուր և աւելի հարուստ կերպով:

Ընայելով տեսակ տեսակ կարեաց և կարօտութեանց մեր շարունակելի աշխատութեանց մէջ, որ ինն պիրք կազմելու են, սոյն երրորդ պիրքը շնորհիւ առատաձեռնութեան վերոյիշեալ մեծատուն ազգատոհմի զաւակ պ. Ա. Տէր Մկրտչեանի լոյս է տեսնում իւր մէջը զետեղուած 20 նկարներով և մի և նոյն գնով, որ նշանակուած էին Ա. և Ր. հատորների համար:

ԼՈՒՍԱՆԿԱՐ

ՄԱՏԹԷՈՍ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ
№
ВЪ ТИФЛИСѢ 1900 ГОДА



Худож.-Лит. Р. Шахбазяцъ въ Тифлисѣ.

ՀՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Ինչպէս յայտնի է երկրորդ գրքում ես տասել էի Վեղարքունեաց գաւառի մինչև այրիճա կոչուած արօտատեղին, և նորա մասին էլ խօսել ու նկարն վրանաբնակների ցոյց էլ տուել, որ և այստեղ սահման մի է Վ՚այոց ձոր մտնելու. ուստի բաժանուելով նոյն Ա.յրիճայի սիրուն արօտատեղերից մենք կշարունակենք մեր ճանապարհը նորա դէպի արևելեան կողմը և կհասնենք մի բարձր սարակատարի վրայ, ուր մեր առաջ խորը անդունդային ձոր է բացւում, ձորի գլխից երևում է Սեւլիմի քարվանսարայը, որ գեռեղուած է քիչ ցածր, որանից մի ժամ հեռու, Ա.խ—քենթ թուրքական փոքրիկ գիւղը, որ սա՝ և ամբողջ ձորը Սեւլիմի քարվանսարայի հետ միասին պատկանում է և կոչուած Ա.րևանաբնակ Նազար Ա՚..եանցին անուն հայազգի մի անձին, որն թուրքերի անպիտանութիւնից շատ դժուարաւ և այն էլ վերջին սա մի քանի տարիներում հազիւ տեղւոյն պրիստաւ պ. Ա.ղէքսանդրի օգնութեամբ կարողանում է կալուածքի տուրքերը ստանալ նորանցից:

Այդ ձորի գլխին կանգնելիս պատկերանում է տեսանողի աչաց, ձորի օձանման պտոյտաւոր դիրքը, որ մի կերպ ամպային խաւով ծածկուած է լինում քանի հեռուն դիտելու լինիմք, սրա բոլորտիքը շուրջ զձորով միմեանց վրայ բարձուած են մեծ և փոքր ու խառն ի խուռն դասաւորած սուր սուր գագաթներով քարքարոտ բլուրներ, որոնք կարելի է համարել մի մի լեռներ քան բլուրներ, որանց եթէ աւելացնենք և այն ժայռոտ բարձրաբերձ ապառաժները և լեռնային շղթաները, այն ժամանակ կունենանք մեր առաջ սարսափելի և մի և նոյն ժամանակ գրաւիչ և բնութեան հրաշալի մի տեսարան:

Այժմ պէտք է իմնել այդ սարսափելի ձորը, որ երկրիս մէջ գտնուած նախնեաց ունեցած ջերմեռանդութիւնը հաստատող կենդանի վկաներին մի առ մի այցելել կարողանանք, թէ և Վ՚այոց ձորի


կայ մի առանձնակի կամարակապ պատճանման տեղ. որոյ յատակը լեցցուած է հողով և աղբով, մեծ դարպասից ներս մտնելիս, որ ոչ շատ մեծ բակ է աջակողմեան պատի վրայ հետևեալ ընդարձակ արձանագրութիւնն է գետեղուած. ձախակողմեան կողմից ունի մի դուռ, որ տանում է մի կամարաձարդ ընդարձակ տեղ, երկու կողքերին ուղղահայեաց սիւնազարդ կամարներով սենեակներ են. այստեղ ևս կենդանեաց աղբով ծածկուած է մինչև սեանց գլուխները, որովհետև ձմեռները այս տեղ են պահում ոչխարների հօտերը, այս կամարաձարդ տեղ ոյն չիւսիսային կողմը կից շինուածքեան՝ ընդարձակ բակ է, որոյ շուրջը շինուածքներ և սենեակների տեղեր երևում են, թէև ողջ շինուածքնը հաստատուն է, բայց մէջ տեղից ճաքուել է երկրաշարժի ժամանակ. ոմանք ասում են, որ կայծակ է խփել:

մուտքը—ճանապարհը կարելի է մի քանի տեղերից անել, բայց մենք պտուտելով այժմ դեղարքունեաց պատառը, ուստի մեզ համար մօտ ճանապարհն է այս, որանից հետ շարունակաբար Ախքենթ, Կարապլուխ ևլն. գիւղերից անցնելով արդէն վայոց ձորում ենք լինում. բայց մենք նախքան առաջ գնալուց իմանանք այս երևացած շինուածքնը գնելու, որ իր ժամանակին ծառայելիս է եղած ճանապարհորդաց իբրև իջևանատեղի, և կոչւում է Սելիմ Քարվանսարայ: Սա մի հաստատուն շինուածքն է սրբատաշ քարերով կազմուած, տանիքը օրօցաձև և մեծ սալաքարերով ծածկուած. մեծ դարպասի ուռը հարաւային կողմից է, որոյ ճակատին վերևը ունի արաբերէն ընդարձակ արձանագրութիւն. դրան շրջապատը քանդակապատուած է պարսկական ճաշակաւ, և այս քանդակագործութեանց երկու կողքերին դրած է պարսից արեգակնային նշանը: Սոյն դրան կողքին



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

№



ԱՍՏՂԱՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՂԹ ԱՐՁԱՆ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՏՈՒՆ Ա. 265

Տպարան Ա. Ա. Մ. Ր. ԱԱՀԱՅԱՀԱԱ


Ելեմ քարվանսարայից մինչև Այոց ձորի Խաշ—քենտ գիւղը մօտաւորապէս 28 վերստ ճանապարհ է, սարսափելի եղ և էջևերով, սա պարսկաստանի քաղթականներից հաստատուած մի գիւղ է, զեռեղուած բարձրաբերձ ժայռերի և լեռների մի ձորի բերանում, որի միջով հոսում է մի կարկաչուն առուակ, որ Խաշ-քենտ, Օրթա-քենտ և Քեշիշ-քենտ գիւղերի անդաստանները ու պարտէզներն ջրելով գնում թափւում է Այրփա չայ գետի մէջ: Սոյն վերոյիշեալ երեք գիւղերի թրքական անունները ինչպէս յայտնի են, վերջի ժամանակի ծագումն ունին, որ նայելով գիւղերի դրիցը անունները են դրել. օրինակ Խաշ, հնշանակէ դլուխ, էնո, գիւղ, որովհետև սորա դիրքը միւս գիւղերից բարձրը լինելուն, գլուխ գիւղ անունն է ստացել, նոյնպէս էլ օրթա, նշանակում է միջին, որ քեշիշ-քենտի և բաշ-քենտի մէջ տեղումը լինելուն, օրթա-քենտ կամ միջին գիւղ են անուանում. իսկ սոյն վայրերի հին անունները մեզ անծանօթ են, սակայն դիմելով հայր Ստեփաննոս Օրբելեանի պատմութեանը, որ սա ինքը իւր ժամանակի արձանագրութիւններից և աւանդութիւններից տեղեկացել է, որ Այրդանանց գօրքի մնացորդների մի մասն, պարսից հալածող զօրաբաժնից նահատակուել են այստեղ, որոնց ոսկերատեաց վրայ Դիւտ կաթուղիկոսի հրամանաւ կաթուղիկէ մի եկեղեցի է շինւում, որին ժառանգութիւն է տրւում բոլոր վայրը սկսեալ մեծ գետից—Այրփա—չայից մինչև դէպի լեռնակողմն, որ Սրկզոնք էր կոչվում, բայց Օրբելեանի օրերում ինքը աւերացնում է ասելով թէ» յետ աւերման տեղոյն եղև շինանիստ գեղջկաց և կոչեցաւ տեղին Խոտրլէր» Օրբել. պատմ. Ը. հտ. գլ. ժթ.—

Գիւղս շրջապատուած է պտղատու ծառաստաններով և այդիներով. սոյն գիւղից դէպի արևելք—հիւսիս է մի ճանապարհ, որ տանում է ս. Յատուածածնայ սպիտակաւոր վանքը, թուրքերից կէ-վանք անուանեալ, երեք առնուած այն վարդի ծառերի շատութիւնից, որ վանքի շուրջը խիտ խիտ լցուած են:


Վանքը դեռ հեռաւոր, ճանապարհին հէնց գիւղից բաժանուելիս ուղևորը նկատում է իւր շուրջը տես-

Եթէ Խաշ-քենտից նոյնպէս բարձրանանք նեղ ձորակով դէպի հիւսիս արևելք. մեծ քարաժայռի ստորոտով, որ ճանապարհը դժուարին, քարքարոտ և ոլոր մոլոր զառի վեր և զառի վայրներով լեցն է, մօտ մի վերստ բարձրանալուց յետոյ՝ մեր հանդէպն կդայ «Պռօշի կապ կամ տեղական արտասանութեամբ «գեաբ» կոչուած կիրճը, մեր աջ թևի կողմը արձանացած է հսկայական ահռելի քարաժայռ որի կատարը ինչպէս սաւառ են «յամպս ծրարի» ներքև՝ խորափի անդունդ, որի միջով փոքրիկ վտակ է վայր հոսում, նայում էք դէպի ձախ՝ նոյնպէս քարաժայռներեն սուր սուր կատարներով, այս քարաժայռի մէջ ընկնում է մի ուրիշ խորափ ձորակ, որի միջով սակերի վերայից փրփուր դարձած հոսում է մի ուրիշ վտակ, որ խառնուելով միւսի հետ կազմում է Խաշ-քենտու գետակը:

Ընդնում էք Պռօշի կապը երկիւղով և ահա ձեր առաջ բացուում է մի մեծ կամարաձև փոս ամենատեսակ լեռներով պատած. այս կամարացանման փոսի մէջ, մի բարձրադիր բլուրի վերայ ուղեցոյցը մատնանիշ է անում «Պռօշ իշխանի» բերդը. բերդը ուշադրութեան արժանի ոչինչ չի ցոյց տալիս, պարիսպները, որ կոփածոյ մանր քարերից են շարած և կրաշաղախ են, տեղ տեղ արդէն քանդուել են, բարձրադիր չեն, ամրացրած են աշտարակներով, բերդի միջնավայրում ընկած են քարի մեծ բեկորներ, որոնց կոպճին պատում է մեծ ջրամբար, մի հօր, որի պատերի վերայ դեռ ևս կիրով սուաղի հետքերը մնում են, շրջում էք այս ու այն կողմ դռներ գտնելու, բայց կարծես դուռ չունի. սակայն հարաւային պարսպի մօտ, ներսի կողմից երևում են մի շարք փլուած սենեակներ և ուղեցոյցը ձեզ մատնանիշ է անում երկու դռներ, մէկը հարաւային պատի արևելեան և միւսը արևմտեան անկիւններում; կամարակերտ և սրբատաշ քարերից, արևելեանն բոլորովին անվնաս է, իսկ արևմտեանի կամարը փլուած է արդէն. բերդի միջի սենեակների միայն մէկն է, որի կտուրը և պատերը չեն փլուած. տարաբաղդաբար ոչ մի արձանագրութիւն չերևեցաւ մեզ այն բերդի մէջ:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.




Տեսարան Ք. Ալեքսանդրապոլի գլխավոր փողոցներից մեկի. Ա. Ղազարյանի հրատարակությունը № 206.

Ալեքսանդրապոլ. Տիպ. Ա. Ղազարյանի.

Եւ որովհետեւ վ՚այոց ձորում ճանապարհորդել, նամանաւանդ բոլոր հնութիւնները իւր կարգին տեսնել ու նկարելու համար՝ շատ և շատ դժուարութիւններ կան, ուստի սոյն բոլոր պատճառների համար մենք ընտրեցինք նորա աշխարհապրական դիրքի վերայ մի ճուտաձև գիծ, ու սկսեցինք ճանապարհ ընկնել նախ Խաշ-քենտից, այտեղից 7 վերստ հեռու դէպի հարաւ—արևմուտք Ղոյթուլ աոուած հայաբնակ գիւղը Ուրփայի գետեղրում, որ ոչ մի հնութիւն չկայ: Հաւնակենք դարձեալ մեր ճանապարհը դէպի Ուրփա գիւղ, որ գետի ձախ ափումն է գտնվում, ճանապարհի անկանոնութիւնից հարկադրուած է ճանապարհորդը վտանգը աչքի առաջ առնելով այդ սրընթաց և ահռելի հոսանք ունեցող գետի վայրիցը անց ու դարձ անել երկու անգամ. իսկ երրորդ անգամ կամուրջով անցնել Ուրփա գիւղի եզերքը, և ահա երկու երեք վերստ ճնացած գիւղն երևում է գետի եզերքին, շրջապատած երեք կողմից ծառաստաններով և այգիներով· իսկ մի (գիւղի արևելեան կողմը) սուր և բարձր ժայռապատ մի լեռնով, գեռ գիւղին չհասած մէկ վերստ ճանապարհի վերայ դէպի մեր աջ կողմ սուր սուր ցցուած ժայռերի տակ սիրուն և գողտրիկ շինութեամբ մի եկեղեցի է գտնվում· քիչ բարձրանալով ճանապարհից արդէն եկեղեցւոյ առաջն կբնենք, որոյ շուրջը հանգստարանն է եղած, մի քանի տեղեր խաչաքարեր կանգնեցրած են անարձանագիր, շինութիւն եկեղեցւոյս, է մաքուր տաշած գեղին քարերից· տանիքը նոյնպէս սրբատաշ քարերից սալած, սիրուն կամարակէս ունեցել է բայց այժմ խոնարհած, շինութեան քարերիցը տեղ առ տեղ թափուած, միակ արևմտեան կողմի դրան վերայ խաղողի և տերևների մէջ տիրամօր պատկերն է

ԸՐԱՊԱՐԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
№
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՓԱՐ

սիրուն և հիանալի քանդակուած. միածին Յիսուս փրկիչը պրկում, գահի վերայ նստած, և սա բարակ սիւնանման շրջանակի մէջ է առնուած. իսկ շրջանակից դուրս վերև երկու կողմերը ընդարձակ արձանագրութիւն մի կայ, որոյ երկու տեղից քարերը թափած և մի փոքր էլ գժուարընթեռնելի լինելուն չկարացինք բովանդակութեան տեղեկանալ. եկեղեցւոյ չորս կողմերից մի մի լուսամուտներ կան, արևմտեան լուսամուտի արտաքին կողմը քիչ վերև երկու կողքին դէպի շինութեան ծայրը դուրս ցցուած լուսնի բոլորակ պատկերներն է քանդակուած. նոյնպէս արտաքին կողմի չորս բոլորտիքը շինութիւն, քարերի վերայ հառնարեա մեծ մասամբ փոքրիկ խաչեր են փորագրած: Չնայելով արտաքին կողմի տեղ տեղ քայքայուած լինելուն, ներսի կողմ ողջ է և հաստատուն. բացի կամուղիկէի քանդուածքը, որից անձրևն և ձիւնը ներս են թափվում. ներսի կողմը խաչաձև է, չորս բոլորակի սիւներ առանձնակի բարձրացած եկեղեցւոյ տանիքը պահում են, սիւների գլխները թափաձև քանդակներով է և վերևը կամարներ ալ և ձախ տարածուած, որոնց մի ծայրը դէմի ընկեր սիւնի կամարին է միանում և միւս ծայրը շինութեան պատի մէջ հագցրած է. դեռ ևս անխախտ ճնում է պատարագամատոյց սեղանը, բեմով, վէմ քարով և երկու կողքին փոքրիկ խորաններով: Ինչպէս, ասում են գիւղացիք պալես են այս տեղ ուխտ և պատարագ անել տալիս տարին մի անգամ. դրան վերայ կախ արած են գիւղացիք մի փայտեայ դուռ, տարաբաղդաբար այս տեղ էս չենք կարողանում մի բան իմանալ եկեղեցւոյ հաստատութեան բուն թուականի մասին, անարձանագրիր լինելուն:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

№

Типография Д.М. Ахвердиева

Библиотека и фондохранилище Института



Ա

րփա գիւղի արեւելեան կողմի քարաժայռը բարձրանալով մօտ 7 վերստ հեռաւորութեամբ սորա հիւսիս—արեւելեան կողմի անդընդային ձորում գտնվում է 20 տներից բաղկացեալ թրքաբնակ Ումաղու գիւղը, դիշերելով այստեղ ուզեցանք առաւօտը գնալ վանքերը տեսնելու. որ գիւղից երկու վերստ հեռու է մի փոքր բարձրադիր տեղ, մի ապառաժ լերան ստորոտում հաստատուած են սոյն Ումաղու նորավանքերը, որ Օրբելեան իշխանների և ցեղի շինածներն են. և որոց գերեզմաններն էլ սուտ են:

Վանքը հասարակ քարերից պարսպապատ է եղած, որուն միայն հիւսիսային և մասամբ արեւելեան կողմերինն են մնացած, հիւսիսային պարսպի դարպասներից չի կարելի մտնել, որովհետև մօտիկ բարձրաբերձ ժայռերից թափուած բեկորներից և պարսպի քանդուած քարերիցը փակուած են, ուստի արեւելեան կողմի քանդուած տեղերից ներս մտնել կարող եղանք:

Նախ քան ներս մտնելը, պարսպից դուրս երևում են սենեակների և տների հիմքեր. ինչպէս ասացինք եկեղեցիները ձորի մէջ, բարձր, մերկ ժայռի տակ են, դեռակից շատ բարձր դիրք ունեցող մի հարթավայրի վրայ:

Ներսահներից մին՝ երկհարկանի եկեղեցի է, Ռուբէել իշխանի կառուցածը, (տես № 268 նկար) սորա հիւսիսային կողմը 100 քայլ հեռու ս. Կարապետի եկեղեցին և Սմբատ իշխանի դամբարանը, որոնք նորա եղբայր Տարսայիճ իշխանը շինած է. դամբարանի շինուածիւնը կազմուած է սրբատաշ քարերով, կամարակապ և չորս որմնափակ սիւների վրայ կառուցած, փոքրիկ բեմով, սեղանի վրայ երեք որմնափակ սիւներ են, որոց իւրաքանչիւրին վրայ նկարած է մի մի բերանաբաց օձ լեզուներն դուրս հանած. սոյն դամբարանի մէջ ամփոփվում են Օրբելեանց տոհմի նշանաւոր անդամների նշխարները, որոնց տապանաքարերը շինուածեան յատակը ծածկած են,

բացի մի քանիսից բոլորն էլ արձանագրութիւն-ներ ունին, որոնցմէ հասկացվում է, որ այս տեղ է թաղուած Սմբատ իշխանն ԶիՒ. հայկական թուին, երկրորդը Տարսայիճ իշխանի կին Մինա խաթուն 1298 փրկչական թուին. մի ուրիշը Խուզդայինն, մի այլ քարի վրայ գրած է, «վարդապետն ոպան Սմբատ, որդի Բուրթելին յիշեցէք» միևն էլ կայ, որ դժուարընթեռնելի եղաւ մեզ. մի տապանաքար՝ Տարսայիճ իշխանի, վրան այսպէս գրած,

«Այս է հանգիստ արքայաշուք կոմնակալին, հզօր և մեծ գործակալին. քաջապահ մենամարտին. Ընթարէգ Տարսայիճին։

Մի այլ տապանաքարի վրայ, ի թվին ՁՃԹ. «զգեղեցկատիպն Էլիկում որդի մեծի Տարսայիճին, որ առիւծօրէն խրոխտ մռնչէր ընդդէմ պլաւեռ գնդին, աղաչեմ յիշել յաղօթս» ևլն. մի քանի քարեր ևս կան որոնք ինչպէս յիշեցինք չունին արձանագրութիւն։

Սոյն դամբարանի կողքում է Սմբատ իշխանի կառուցած ժամատունը, որ մի ընդարձակ քառանկիւնի շինութիւն է, ամրացած ութ որմնակից բոլորակի սիւների վերայ, որոնց կամարները միանալով առաստաղի հետ կազմում են երդիկում մի լուսամուտ. հիւսիսային կամարի տակ քանդակած է ձիու վրայ նստած մի մարդու պատկեր, որ գլխին եռանկիւնի սաղաւարդ ունի դրած, ձեռին սուր, որ իջեցնում է կատաղի վագրի գլխին։

Ժամատան արևմտեան դրան վրայ քանդակուած է հոր աստուծոյ պատկերը, ձախ ձեռքում մի գունդ և աջ ձեռքով խաչակնքում է, որոյ մի կողմը հրեշտակ իսկ միւս կողքին էլ քրիստոսի խաչելութիւնն է քանդակուած։

Դարձեալ արևմտեան կողմը հէնց լուսամուտի տակը քարի վրայ քանդակուած է տիրամօր պատկերը։

Ներքին կողմը ժամատան շատ արձանագրութիւններ կան, որոնք տպուած լինելուն զանց ենք առնում այս տեղ։



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

№



Տաճար Էջմիածնի Գամբռնաձոր № 2002

Լուսանկար Մ. Փափազեանց.

Тифлисъ, Лит. Р. Шахбазяна

Ամատան մէջ էլ կան շարէ շար դրուագ տապանաքարեր, ուր արձանագրութիւններից երևում է, որ իւրեանց մէջ ամփոփում են շատ նշանաւոր անձանց նշխարները թէ Օրբելեան ցեղից և թէ Հոգևորական դասից, որոյ համար ասում է Սիսական պատմախօս Ս. Եպիս. Օրբելեան թէ «սա շինեաց զհրաշակերտ ժամատունն ի նորավանս ի վերայ գերեզմանացն իւրոց և արար բազում արդիւնս և փարթամացոյց զնա» Օրբել. պատմ. գլ. ԿՉ.

Նոյն տապանաքարերի մէջ կան մարմարիօնէ քարեր էլ, որ ոչ բարձր են գետնից, այս վերջիններից մինին առակ հանգիստ են առած Սիսական աշխարհի պատմութեան հեղինակ Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի նշխարները-Հայաստանեայց եկեղեցւոյ այն ախոյեաններից մինին, որոյ տապանը կրում է սոյն արձանագրութիւնը. (ի թվին ՉՆՈ.) (752—կամ փրկչական 1303)

«այս է շիրիմ Հանգստեան մեծ մետրապոլիտ Սիւնեաց Ստեփաննոսի»

միւս մարմարիօն տապանաքարը պատկանում է աւրբել Յովհաննէս եպիսկոպոսի Հոչակաւոր մետրապոլիտն սիւնեաց. կան Ղուկասի, Սարգսի, Գրիգորի, Ստեփաննոսի և Յովհաննէս սիւնեաց եպիսկոպոսների. ու իշխանացն Իվանէի, Էլեկումի Փախրուդուլային ևլն. նա և այստեղ է գտնվում Սմբատ և Տարսայիճ իշխանաց մայր Ըսփա տիկնոջ գերեզմանը ևլն:

Ուրեմն Ըմատու նորավանքը ինչպէս տապանաքարերից և պատմութիւնից յայտնի երևում է, եղել է Վայոց ձորում Օրբելեան տոհմի դամբարանը, ուր բոլոր ցեղը թաղուած են. իսկ անարձանագիր և կոտրատուած տապանաքարերն էլ

ԴՐԱՐԱՆԻՍ ՍԵՒՀՈՎՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1383-2003

ՈՎ Է ԻՄԱՆԱԼ ԹԷ ՆՈՐԱՆՑԻՑ ՈՒՄԻՆ Է ՊԱՏԱԿԱՆԱԼ։

Ժամատնից մնում էք երկու երեք աստիճաններով իջան Լիսարիա Օրբելեանի կառուցած 670 Հայկական Թուականին Ս. Կարապետ եկեղեցին, որոյ արձանագրութիւնը եկեղեցոյս Հիւսիսային պատի վրայ է։


Եկեղեցւոյ շինութիւնն շատ փառաւոր է, որոյ համար Ս. Օրբել. իւր պատմութեան մէջ ասում է «Նա ասարտեն գնա ամն եօթն ուխտն խորանօք». ամբողջ շինութիւն կարմրաշէկ սրբատաշ քարից է, չորս որմնակից սիւների վերայ հաստատուած և չորս լուսամուտներով։ Ալէջազարդ կամարակիր, որն արդէն բոլորովին խոնարհուած է, ներքին կողմից տախտակով ծածկած են կամարակէի բացուածքը։

Ընդարձակ Ս. Կարապետի տօնին գալիս են Կարապետի մօտակայ գիւղերից ուխտի, մատաղ են անում և պատարագ մատուցանել տալիս. մի մեծ սեղան ունի և ութն էլ փոքր, որոնցից չորսը վերջին և չորսը առաջին դասումն են, սոյն եկեղեցւոյ և դամբարանի արտաքին կողմից եթէ նայելու լինինք, ոչ մի բան չի նշմարուել բացի քարակոյտներից։ Հիւսիսային կողմը բարձր ապառաժ ժայռը, որոյ ստորոտին կպած են եկեղեցին. ժամատունը և դամբարանը, սոցա քայ.քայուածքն էլ շինութեանց վրայ և շուրջը թափուած լինելուն, կատարեալ մի քարակոյտի տեսարան են ներկայացնում ուղևորի աչաց։ (Տես № 269 նկար)։



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

№



Տպարան Ալ.Մ.Թ Աֆեզեանի

Արգելվում է արտատպումը առանց թույլտվության


Սոյն շինութեանց Հարաւային կողմը, ինչպէս վերև ասացինք, 100 քայլ հեռու Ռուբէել իշխանի կառուցած չքնաղ տաճարն է նոյն իսկ պարսպի մէջ, որուն պիտի անուանենք մենք նրբաշէն, հոյակապ, երկյարկանի մի եկեղեցի: Սրան շինած է Ռուբէել իշխանը Հայկական ՉՉՐ—թուին փրկչական 1339, Սիւնեաց պատմիչ Ս. եպիս. Օրբելեանի մահիցը ուղիղ 36 տարի յետոյ, ուստի չենք ունեցել մի այլ Ս. Օրբելեան պատմիչ, որ մեզ աւանդէր յիշեալ եկեղեցւոյ անունն և նորա անցեալն: Սոյն տաճարի շինութիւնը միատեսակ բաց դեղին քարերից է կազմուած ու միմեանց նրբութեամբ յարմարեցրած: Ներքին յարկի դրան վրայ կիսաբոլոր քարի վրայ քանդակուած է, Մարիամ աստուածածնայ գահի վրայ բազմած պատկերը, գրգումն աստուածորդին—մանուկ Յիսուս. Աստուածածնայ վերևը դրած է «Մայր աստուծոյ» երկու կողմերը հրեշտակապետները կանգնած, իւրաքանչիւրն տակը գրուած է Գաբրիէլ և Միքայէլ անունները, ոտքա բոլորի վրայ փորագրած է ՉՉՐ—տաճարի շինութեան պարզ թուականը:

Սոյն ներքնայարկ եկեղեցւոյն ներքին կողմն է համարակապ, և չորս որմնափակ սիւների վրայ կանգնած, ոչ բեմ ունի և ոչ սեղան, գուցէ սա գաւիթն է վերին յարկի եկեղեցւոյն կամ պահարանը և կամ դամբարանը որովհետև երևում էլ են սորա յատակի վերայ ձգուած գերեզմանաքարեր բայց անթուական, առաստաղի չորս անկիւններում քանդակներ կան, մինը Յիսուսի կիսարձանը, իսկ միւս երեք անկիւններում երեք կենդանակերպներ, ցուլ, առիւծ և արծիւ, ուրիշ ոչ ինչ չէ՛ք տեսնիլ այս տեղ: Իսկ այս շինութեան վերին յարկը, — եկեղեցին բարձրանալու համար, սորա

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԵՀՂԱԳԻՐՔ
№
ՊԵՂԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ

արևմտեան միակ դրան աջ և ձախ կողմերից մի և նոյն տեսակի քարէ աստիճաններ են բարձրանում բաւականին նեղ, որ մարդ ազատ չի կարողանում բարձրանալ կամ իջնել, սոյն աստիճաններն, որոնք մի ծայրով միայն ամրացած են պատի մէջ և թուով տասն և հինգ են, միանում են երկրորդ յարկի դրան առաջ և կազմում են նորա մուտք, ու ելքը: Սոյն տաճարիս գմբեթին էլ բոլորովին խոնարհած է. շինութեան ճակատից և տանիքից քարերը թափուած են թէ վերնայարկի յատակը և թէ շինութեան առաջ, որոյ համար վերնայարկը բարձրանալիս տեսնում էք քարերի ահագին կոյտ, որոնց մէջ կարելի է տեսնել սիրուն քանդակուած սիւնի պլուխներ, սեան կտորտանքներ, տանիքի սալաքարեր ամբողջ շինութիւնը մի քանի տեղերից էլ ձեղնքուած է. եկեղեցւոյ ներսը ունի աւազ մեծ սեղանը որոյ երկու կողքին փոքրիկ խորաններ, գողարիկ, բարակ որմնափակ սիւներով բաժանուած, սոյն շինութեան արևելակողմը ներքին յարկի, լուսամուտից վերև մի տողի վրայ սիրուն ծաղկապիր տառերով գրած է (Ւիւրթել իշխանաց իշխան) սիրուն և հիասքանչ ճարտարութեամբ քանդակուած ծաղիկների մէջ տեղաւորած: Տես № 270 նկարից:

Վերնայարկի դրան վերևը քանդակուած է առաւածորդու պատկերը, որ ձախ ձեռքով աւետարան ունի բռնած և աջով տեառնապրում է, տակին գրած է Յիսուս, Քրիստոս, աջ և ձախ կողմերում Պօղոս և Պետրոս առաքեալները որոց իւրաքանչիւրի կողքին գրած է անունները. թէ սոյն վերնայարկը և թէ ներքնայարկը շրջապատուած են իբրև ժապաւէնով հիանալի ծալկանման նկարներով:



Лит. Шахбазянцъ Тифлисъ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
№
ՊԱՀՊԱՆՈՒՄ ԴՐՎԱԾՔՆԵՐ






ՔՈՒՐԴԵԼ, ԻՇԽԱՆԻ ԾԱՂԿԱԳՈՐԾ № 270

Էջմիածնի մ. Փաստաբանց։

Тифлисъ, Лит. Р. Шахбазянца



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

№



ԱՐԳԱՍՅՈՒ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ № 27

Художн.-Лит. Р. Шахбазяца въ Тифлисѣ.

ՀՈՒՇԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Ելեշկայ գիւղից դէպի հիւսիս 5 վերստ հեռաւորութեան վրայ գտնվում է Ա՛րգեազ Թըրքաբնակ գիւղը, ի հնումն Ա՛րկազան կոչուած: Ա՛նապարհը շատ քարքարոտ է յայտնի երևում է այստեղ· որ հեռու գտնուած Դալիք-Թափա սարի հրաբուղխից արտավիժած քարերն որ անձրևի նման սփռել է իւր շուրջը գտնուած տեղերում ինչպէս այստեղ Ա՛ղեչկայում նոյնպէս և սրանից դէպի սուրբ խաչի Ճանապարհը, միշտ քարեր և քարակոյտներ է տեսնում ուղևորը ամբողջ Ճանապարհում: Ա՛րգեազու հռչակաւոր ուխտատեղին—Ս· Խաչ վանքը գտնվում է Ա՛րգեազ գիւղից քիչ հեռու: Ս· Ղ՛ալալեանցի 1857 թուերին Ճանապարհորդութեան ժամանակ սոյն վանքի տեղ մի եկեղեցի է եղել կանգնած, որոյ մասին նա ասում է «շինուածքն է միջակ կառուցեալ՝ ի կոփածոյ քարանց, «որոյ երկարութիւն վիշտասան քայլ և լայնութիւն չորիքտասան· յաջմէ և յահեկէ սեղանոյն գան սուրբգաւազնք և այլն, Ղ՛ալալ· Ճանապարհ· հտ· Ի· երես 192: Սորա տեղ այժմ կառուցած են ժողովարարութեամբ 1868 թուականներին մի նոր և մեծ եկեղեցի: Ա՛յց չէ երևում ոչ մի արձանագրութիւն թէ հին շինութեանը և թէ նորոգութեանը, վերաբերմամբ և ոչ իսկ թուական, այժմեան վանքի շինութիւնը կազմուած է շատ թոյլ և անպիտան կապոյտ քարերից, որ աւազախառն լինելովը հեշտ փշրվում է թէ անձրևից և թէ այլ պատճառներից· ինչպէս արդէն տեղ տեղ պոկուած և թափուած է, տանիքը ոչ սալաքարած, այլ աւազախառն կրամածովք ծածկուած լինելուն,

կողմում երեք երեք հատ, ունի մեծ պատարա-
գամատոյց սեղան երկու կողքին խորաններով,
որոց հարաւային խորանի մէջ է գետեղուած կեն-
ցաղական մասունքը, ներքին կողմը չունի յիշատակու-
թեան արժանի մի բան, ինչպէս արտաքին կողմը
նոյնպէս էլ ներսը պարզ է,—ասիտակ ուաղաց:
Եկեղեցւոյ շուրջը պարսպապատ է հասարակ քա-
րերով և տեղ տեղ քանդուած բոլորովին, հիւ-
սիսային, արևմտեան և հարաւային կողմերը ձգած
են ուխտաւորների համար սենեակներ, որոնց մի
քանիսի դուռն է պակաս և այլոց պատուհաննե-
րը, մի քանիսների էլ առաստաղը փուլ եկած է
կամ պատերը, իսկ մի քանիսը ծառայում են իբր
յարդանոց և ախոռ: Եկող ուխտաւորներն այս

մի փոքր անձրևելուց անմիջապէս անձրևի ջուրը
անցնելով առաստաղից կաթում է եկեղեցւոյ ներսը,
չունի դեռ ևս զանգակատուն, այլ մի զանգակ կախ
արած են եկեղեցւոյ արևմտեան դրան առաջ, յի-
րաւի զարմանալի է, որ այնքան ժամանակ եղել է
և հնացելով, վանքը եկամուտ էլ ունենում է, դար-
ձեալ մինչև այժմ թողնուած է տանիքը առանց
ապահովացնելու, այնպէս որ կարելի է այդ դրու-
թեամբ մեղմով շուտով խոնարհի եկեղեցւոյ
գլուխը:

Եկեղեցին բարձր է և գմբեթայարկ, չորս ա-
ռանձնակի հատ սիւների վրայ հաստատուած, ու-
նի երեք դուռ հիւսիսային, արևմտեան և հարա-
ւային կողմերից, 12 լուսամուտներ, իւրաքանչիւր

տեղ են բնակվում, պարսպի արևմտեան դարպասի վրայ վանահօր սենեակն է՝ փոքրիկ մի խցիկ, որոյ կողքին է և ննտեսի սենեակը, որ մի և նոյն ժամանակ խոհանոց է, սոցա շարքում սկսուել է մի սենեակի շինուածին հանդուցեալ վանահօր ժամանակից, որ մինչև այժմ ճնացել է կիսատ: Պարսպից դուրս հիւսիսային կողմում շինուած են թուով 30 ի չափ խարխուլ խանութներ: Ա՛յս է Դարալագեազու Ս. Խաչ անուանեալ հռչակաւոր վանքը միակը Դարալագեազու մէջ, որ ունենում է հազարաւոր ուխտաւորներ, և նշանաւոր ուխտատնացական օրն է Ս. Խաչի տօնին իւրաքանչիւր տարի Հոկտեմ: 8 ին կամ 11 ին:

Ուխտաւորներն գալիս են լատ մեծի մասին, Դարալագեազից, Հուլաւերից, Նրևանի, Էջմիածնի, Սուրմալուի գաւառներից, Նոր-Նայազետի, Նախիջևանի և սոցա գաւառներից, Օանդեազօրից և այլ տեղերից: Դարալագեազում և նորա շրջակայքում յարմար ճանապարհներ չլինելու պատճառաւ՝ ուխտաւորներն գալիս են ձիերով, բայց մեծ մասամբ հետևակ, կանայք և աղջկունք բոլորը ենթարկվում են սոյն վիճակին: Ա՛յս ուխտատնացութիւնը ճշմարիտ մի տեսակ մարտիրոսութիւն կարելի է համարել եթէ աչքի առաջ ունենանք այն բոլոր դժուարութիւնները թէ ճանապարհում և թէ վանքում: Հատերն էլ մեծ դժուարութեամբ բերում են իրեանց անդամալոյծ կամ այլ երկարատև և անբուժելի ցաւով

հիւանդներին: Ուխտաւորների մի մասը բերում է իւր հետ ոչխար, գառն, կով, հաւ եւն. մատաղ անելու, բայց հեռաւոր տեղերից եկողների մեծ մասն իբրեանց մատաղացուն գնում են նոյն իսկ Ս. խաչում, ուր ծախում են Վարագավանքի, հայ, թուրք և քուրդ բնակիչներն և կամ տեղւոյն վանահայրը:

Ինչպէս վերը տեսանք վանքը բաւականաչափ ռեսեակներ և ընդարձակ բակ չունենալուն համար այդ ահագին բազմութիւնն ուխտաւորների ստիպուած են լինում իջևնել վանքի պարսպից դուրս, բացօթեայ դաշտի վրայ, ահռելի քարակոյտերի մէջ պիշերելու:

Նոյն ուխտի ատեն տևում է մինչև երեք օր և այս 3 օրուայ մէջ ահագին և խուռն բազմութիւն է լեցվում: Վանքիս միաբանութիւնը կազմում է մի վանահայր, որ վերջին ժամանակներս է եկած Էմմայեակ վարդապետ տէր Յարութիւնեան, մի տղատես կին, որ բաւական տարիներ ծառայած է այդ տեղ, որ մնում է վանքի տնտեսութիւնն է հրամում. մի հովիւ, երկու ծառայ, մի թուրք պահապան նոյն պիտոյի: Վանքը չունի վարելահող, թէև տեղ որոշած է կառավարութիւնից բայց դեռ չէ յանձնուած, ջուր բնաւին չկայ, եղել է հին ժամանակ ջրի ճանապարհ, որ գալիս է եղել ուղղակի վանքի բակը, բայց բաւական տարիներէ ի վեր այդ ճանապարհը քանդուած և փճացած լինելուն, այժմ հարկադրուած են $1^{1}/_{2}$ վերստ հեռու ձորի միջից էշերով ջուր բերելու:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

№



ԹԱՂԱՀԱՏԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔ № 275

Тифлисъ, Лит.Р. Шахбазянца

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ։

ԹԱՆԱՀԱՏԻ Ս· ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՆՔ № 275



ուրը խաչից դէպի արևմուտք երկու և կէս վերստի չափ հեռի մի սարահարթի տեղւոյ վրայ կառուցած է Թանահատի վանքը· Ս· Ստեփաննոս անունով, տեղւոյ օդը ոչ այնքան լաւ, իսկ ջուրը վատառողջ· միմիայն 20 տուն աղքատ թուրքեր են, որ բնակութիւն են հաստատել հենց վանքի շուրջը վանքի բակն էլ շինել են կալի տեղ: Երբ մենք հասանք վանքի դրան առաջ, նախ մեր աչքառաջն եղան թուրքերի երեխայքը, որ ակռոր և կամ պլլտած չորերով տաճարի մէջ խաղ էին անում, ուր երբեմն Աբրիատոս էր պատարագում, Թանահատի տեղը Ս· Օրբելեան անտառային է կոչում, բայց այժմ ոչ թէ անտառ, այլ տերևի նշոյլն անգամ չենք տեսներ:

Վանքիս շինութիւնը հայկական 700 թուականի սկիզբներին է պատկանում, թէ և որոշ մի արձանագրութիւն չկայ, սորա մասին, բայց տեղ տեղ գտնուած եղծեալ արձանագրութիւններից երևում են թուականներ ՁԽ· ՁԿ· և մինչև Ձ թուական: Վանքի արտաքին կողմն ըստ մեծի մասին ծածկուած է արձանագրութիւններով, որոնք աւելորդ կհամարենք աստ նշանակել, որովհետև համարեայ բոլորը տպուած են Ղալաեանցի և այլոց ճանապարհորդութեանց մէջ: Վանքի բոլոր շինութիւնը սև սրբատաշ քարերից է, երևի սորա համար էլ թուրքերը զարա վանք են անուանում սև վանք, սիրուն և վայելուչ կամարակապ նոյնպէս սրբատաշ քարերով սալած, բայց սորա վերին ծայրը արդէն փուլ եկած է· արտաքին կողմը ինչպես նկարում կերևի հարաւային պատի վրայ լուսամուտից ներքև մի կողմը կայ արեգակնային ժամացոյց, իսկ սորա միւս կողմը թևերը ծալած մի արծիւ մի գաղանի պիշատում է, սոյնանման նկարներ եկեղեցւոյ ամեն կողմը քանդակուած կտեսնէք: Նոյնպէս կամարակապի հարաւային լուսամուտի վերայ արաթռիչ արծիւը թևերը բաց ու իւր մատիններին մէջ ոչխար բռնած ունի, սորանից վերև կամարակապի վերին ծայրում մի աղաւնու պատկեր· սոցանից դէպի արևմուտք, ձեր աչքին երևում է կատարի առիւծի պատկերը, որ յարձակուելով ամեհի ցուլի վրայ կամենում է խեղդել նորան: Նոյն ձևի քանդակք հայոց հին եկեղեցեաց շատերում երևում են ինչպես են Կեղարդայ կամ Այրիվանաց քարափոր եկեղեցեաց մէջ: Նոյպէս գմբեթի բոլորտիքը

երեւում են եղան և առիւծի գլուխներ ու ազատնոյ նկարներ ամենևին մնքուր քանդակուած: Նկեղեցւոյս հիւսիսային կողմը կայ նաև փոքրիկ, համարակապ մի մատուռ, որոյ արևելեան կողմի պատը բոլորովին քանդուած, տանիքը տեղ տեղ խախտուած, միայն արևմտեան կողմի պատը կայ կիսակործան և մի դուռ նոյնպէս արևմտեան կողմը, և դրան վերը կիսաբոլոր քարի վերայ քանդակուած է մի գինուորի պատկեր իւր ձեռքում ունելով նիզակ՝ որ ցցում է իւր առաջ կանգնած առիւծի բերանը, կայ նաև սիրամարգ առիւծից վերև, մի յովազ սոցա և ձիու վերև, ձիաւորի յետին կողմը մի թռչուն. ամենք սոյն ձիաւորին օրհորդի են նմանեցնում:

Վանքիս արտաքին տեսքը գննելէ վերջ մտնենք ներսի կողմը, որ փոքրիկ շինութիւն է չորս որմնատիպ սիւների վրայ հաստատուած, համարեայ ամենևին ամբողջ է ներսի կողմը, ունի աւազ պատարագամատոյց սեղան մեծ, բայց առանց վէմ քարի, և կողքերին երկու խորաններ, որտեղից աստիճաններով իջնելիս են եղել, սակայն այժմ հողի և աղբի կոյտերի պատճառով համահաւասարուել է յատակին, ունի նաև վեց փոքրիկ խոռաններ, յետին և աւազ դասերում, սոքա են բոլոր արտաքին և ներքին տեսքը Թանահատու վանքի: Ինչո՞ւ է կոչվում այս Թանահատի վանք, սորա համար մենք հրատիրում ենք կարդալ Օրբելեանի պատմութիւնը, որ Սևանայ Աշտոց վարդապետի պատմութիւնից քաղելով ասում է, թէ սոյն վանքի միաբանութիւնը մշտապաշտօններ են եղել, և հետու ամեն տեսակ կերակուրներից, միայն օրն մի անգամ ուտելով այն ևս ցամաք հաց ու ջրով և կամ բանջար ու ունդերով են եղել կերակրուելս, իսկ Թանի պտղի և իւղի ամենևին չեն ուզեցել մօտենալ, ուստի Թանից կտրուած լինելնուն համար Թառհատ են կոչուել, նոյնպէս վանքն էլ նրանց անունը ստացել է—Թանահատի վանք:


Վանքից ոչ հեռի, ½ վերստի վերայ կանգնած կայ խաչ-քար «կանգնեցաւ ս. խաչս բարեխօսութիւն հաչոին» արձանագրութեամբ, ուրիշ խաչքարներ էլ կան եղել, որոյ միայն պատուանդաններն են այժմ մնացել: Ինչպէս վանքի քարերից Թուրքերը տարել են իրենց տների կամ բակի պատերի շինութեանց գործ ածելու, նոյնպէս էլ սրանց կարելի է տարած լինին:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

№

Տպագրված է Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի տպարանում





անահատում մեր գործը վերջացնելով յետ դարձանք կրկին Ս· խաչով և Ընդեաղ գիւղի միջով դէպի հիւսիսային կողմ՝ նայելու գիւղից և թաղլեք-գաբա սարի ստորոտիցը անցնելով եկանք Գենդերէ:

Թաղլեք-գաբա, որ Ս· Ջալալեանցը իւր ճանապարհորդութեան մէջ գազաթնածածկ է անուանում: Այս գաղլեք գաբա կամ գազաթնածածկ սարը ոչ այլ ինչ է բայց եթէ ահագին կամաքանման փոս, որի յատակը ճապարաձև նեղանում է· կարծես հանգած հրաբուխի բերան է, սա իւր արտաքինժած ժամանակ իւր շրջակայքում ափսած և թափած է ահագին տարածութեան վրայ մոխրապոյն, սև և կարմիր չէչայ քարեր մերձակայ նայելու, Գեօքթանլու, Գեօքաբաս, էե-, բեր գիւղերում, և սոցանից էլ աւելի հեռու:

Փոսի մէջ չկայ այնքան նշանաւոր բան, որքան գրում է Ս· Ջալալեանցը իւր ճանապարհորդութեան Ի· հատ· գրքի մէջ· ուստի և նկարելու արժան բան չտեսանք, միայն մէջին ունի մի խարխուլ քայքայուած որմներով շինութիւն, որ մատուռ են անուանում, և կայ քարերի մեծ և փոքր բեկորներ շատ թեթևակշռ· այնպէս որ մարդ կարող է երկու ձեռներով վերցնել մի ահագին երկու արշնաչափ քառակուսի քար: Սորանից ցածր երկար նեղ դաշտի վրայ Գենդերէ կոչուած 20 տնով թուրքի գիւղն է, ուր Դարալագեազի և սորա մօտակայ գիւղերից առաջաւոր ընտանիքներ

ամարանոց են գալիս ժամանակաւոր վրաններ կամ ալաչուխներ հաստատելով։ Մեր ճանապարհը ուղղել էինք գնալու դէպի Ձերհեր, յանկարծ ծանօթացանք այստեղ, մի ազնիւ ընտանիքի հետ այն է Դարալագեազու պրիստաւ պ. Ե. Ենդրէասեան որոց չափազանց հիւրասիրութիւնն վայելելու բաղդն ունեցանք մի օր և երկու գիշեր, կրկին անգամ հանդիպեցանք այստեղ տեսնելու նաև պ. Յամանն տէր Պօղոսեանցին, որն գնացել էր գաչախներ բռնելու Մեր վաստակաբէկութիւնն այստեղ բաւական հանգստացնել է յ՛ոտ մինաք բարեաւն ու մեր խորին շնորհակալութիւնը յայտնելով ընկանք գարձեալ կիզիչ ճառագայթների տակ շարունակելով մեր ճանապարհը դէպի Ձերհեր։ Ընդեղից մինչ այստեղ մօտ 13 վերստ է. Ձերհեր

ինչպէս պատմութիւններից երևում է և տեղոյն աւերակներն էլ անժխտելի վկաներ են, մի ժամանակ մեծաշէն գիւղաքաղաք է եղել. սակայն այժմ հայ և թուրք 130 տուն բնակիչներից բաղկացած մի գիւղ է, որոյ բնակիչները պարապում են հողագործութեամբ և անասնապահութեամբ, գիւղիս հիւսիսային կողմը ձորի միջից վազում է համանուն մի գետ իւր բարեհամ և սառը ջրովը, որ հասնում և միանում է Ընփա չայի հետ։ Սոյն գետակզբում մի 200 ոտնաչափ բարձրութեամբ ժայռի վրայ և հէնց ժայռի ծայրում տեղատուած են, երկու փոքրիկ միաձանց կից եկեղեցիներ, որոց մինը—հիւսիսայինը իւր շինութիւնից յայտնի կկարծուի որ առաջ է շինուած կողքի եկեղեցիից, երկուսն էլ առանց կամարակէի, մինը ունի պա-

տարապամասոյց երկու մեծ խորաններ միմեանցից միայն կամարակապ սիւնով բաժանուած, իւրեանց վէմ քարերով, որոց հարաւային կողմից կայ մի դուռ, որ տանում է կողքի կից միւս հին եկեղեցին, որն միայն մի սեղան ունի: Հարաւային կողմի եկեղեցւոյն արեւմտեան լուսամուտի արտաքին կողմը վերև, քանդակուած կայ մի կատարելի արծուի արձան կիսաբաց թեւերով, որ կամենում է թռչել, իւր մագիլներում ունենալով մի խոյ, կողքին գրած հայկական ԶԼԸ· թուականները: Որոց հարաւային կողմը կայ պատի արեւի ժամացոյց, հայկական տառերով՝ մասամբ եղծուած, այստեղ ևս կան խաչաքարեր սիրուն փորագրութեամբ, նաև գերեզմանաքարեր, որոց մինին վրայ հոգևորականի վերարկու է նկարուած, այստեղ

Հանդստացրին Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսի դագաղը, զոր ինչպէս Օրբելեան գրում է իւր Ը· Հա· գրքի երես 184 «ապա յառաւօտուն խմացեալ պաշտօնէիցն բազում ողբով բարձին զնըշխարհս սրբոյն, տանէին ի սուրբ մենարանն ի լեառն կոչեցեալ սիօն, որ պայծառանայր ճգնաւոր արամբ յայնմ ժամանակի քան զՄինան և զՍիլթայն յԱղիպտոս: Զոր լուեալ Աբրկազան գեօղն՝ տէրամբն իւրեանց ելին ընդ առաջ և հաւանեցուցին զսպասաւորսն Հանդուցանել ի սենեակն, որ յանուն սրբոյն Քրիստափորի անյաղթ զօրավարին շինեալ էր, զոր տարեալ Հանդուցին ի սենեակի:

Մենաստանիս կառուցանողն և ոչ թուականի հաստատութիւն լինելու մասին արձանագրութիւնները մեզ որոշ և բացայայտ տեղեկութիւն չեն

տալիս· արձանագրութեանց տեղ տեղ մնշուած և եղծուած լինելուն պատճառով, բայց Հաւանական է կարծել Հարաւային եկեղեցւոյ դրան վերևի քանդակուած արծուի կողքին պահուած 21 Ս· (731—1282) թուականը, և Հարաւային պատուհան պահուած ընդարձակ արձանագրութեան մէջ յիշուում է «կամաւն Աստուծոյ այս գիր յիշատակ և արձան անջնջելի «մնծաշուք պարոնին Վահրամայ որդւոյ Վասակայ . . . ևն· · որ մե- «Նաջան աշխատութեամբ շինեցին զեկեղեցիս և բաղում սպասիւք զար- «դարեցին յազգս արքայութեան իմոց և երկարութեան կենաց ամուս- «նոյ և զաւմիցն Խրեանց Ութանայ Հասանայ . . . . որ և շարու- նակում է նուիրատուութիւններ· յետոյ թուականը 21 Ս· Հայկական դրեցաւ· ուստի այն վերոյիշեալ երկու թուականներից երևում է, որ 607 տարի առաջ կատուցուել է: Իսկ մի այլ արձանագրութիւն էլ եւս մ է Խնեաց արհի եպիսկոպոսի կողմից դրած, որ նուիրատուութիւն է արել եկեղեցւոյս 21 թուին, զոր ինչպես վերի երկու թուականների հետ համեմատելով 24 տարի տարբերութիւն կգտնենք որն անտարակոյս կողքի հին եկեղեցւոյ համար եղած է դրած, և Հարաւային եկեղեցին 24 տարի վերջն է շինուել, ուստի հին եկեղեցին պէտք է ընդունել Ս· սիօն իսկ ինչպես Ս· Օրբելեանցի պատմութեան· Ս· Ղազարեանցի և Ալիշան· Ճանապարհորդութեանց մէջ ընդունել է, վերջին շինուած եկեղեցին էլ Ս· Աստուածածին համարելն է հիմնուելով Օրբելեան ցնդից Լիպարիտի որդի Սմբատի մի արձանագրութեան վրայ, որ առ բևմեան պատի վրայ է:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

ПРЕПОВѢ ВОЗВОЛЕНЪ
№
ПЕЧАТАТЬ ДОЗВОЛЯЕТСЯ



Տպագր.-Հիւս. Ք. Ալեքսանդրեան եւ Իսահակ.

Երէկից դէպի հարաւ 8 կամ 9 վերստի վրայ գտնւում է Գնթաւազ գիւղը, Ջերէ-ջից մինչ այս տեղ երկու բարձր սարեր բաժանած են ճանապարհը, իրենց մէջ ունենալով փոքրիկ բլուրներ ու ձորեր, այս ճանապարհն անտանելի է և ձանձրացուցիչ, մանաւանդ երբ հասնում է Գնթաւազ գիւղի և կամ գնթաւանքի մօտ, ուր աւելի դժուարանում է ահագին ժայռերի պատճառաւ:

Իսկապէս ճանապարհ չկայ, ոչ ձիաւորի և ոչ էլ հետևակի համար. ուստի ճանապարհորդը ստիպւում է այս տեղ ցածր իջնել ձիուց և ժայռերի միջով շինուած սանդղանման ճանապարհով, գրեթէ մագլցելով ու սողսկելով իջնել, այս ժայռի ստորոտով արևելքից դէպի արևմուտք անցնում է Ըրփա չայ գետի մի ճիւղը, որ իւր արագ ընթանալով ու ժայռերի հետ մաքառելով, էլ ոյժը ում որ հասնում է քար ու քանդ անելով, գնում հաղստանում է Ըրփա չայ գետի մէջ. ճշդիւ նկարագրելու համար մենք այս տեղ կդնենք պատկերանման ցցուած ժայռերի նկարը, որ իւրեանց օձապտոյտ ձևերով միշտ կիրճեր են կազմում, սոյն ժայռերից ցածր իջնելով պէտք է անցնել վերոյիշեալ գետը, որ կարողանանք փոքրիկ բլուրի վրայ տեղաւորուած վանքը տեսնել:

Սոյն բլուրի շուրջը մինչև կէս վերստ հեռաւորութեամբ շրջապատած է նոյն ահագին պատկերանման արձրացած սուր սուր ժայռոտ սարերով: Բլուրի վրայ բարձրանալից յետ թէև և իսկոյն վանքի մեծ դարպասի առաջ կգտնուենք, բայց ներս մտնել անհնարին է, որովհետև քարերով ծածկուած է դուռը:


Միս կողմերից էլ անհնարին է մտնել բակը, կամ աւերակների ձերբուկների, և կամ բնական դիրքի պատճառով, և միայն հիւսիսային կողմի պարսպ տեղ առ տեղ քանդուածների, քարակոյտների վերայով անցնել հնարաւոր է դէպի բակը:

Այստեղ վանքի բակը մտնելիս, բացվում է ձեր առաջ մի գեղեցիկ տեսարան, վանքի բակը եղել է պարտէզ պտղատու ծառերով, ծիրանի, շլորի, դիղձի և որթի, այժմ էլ կան, բակը աստիճան աստիճան ցածրանում է. բակի երեք կողմում, սկսեալ վերոյիշեալ մեծ դարպասից դէպի հարաւային կողմը և մասամբ էլ դէպի արևելեանը շինութիւններ են եղած միաբանների համար, այժմ միայն պոմը, հացատունը, խոհանոցը, սեղանատունը, երկու սենեակներ, ախուրը և մի ներքնատունը բոլորովին անվնաս մնացած են. իսկ մնացեալ բոլոր շինութիւնները կիսակործան դրութեան մէջ են:

Ամբողջ մնացածները մեծ մասամբ հարաւային կողմումն են գտնվում, որոնց տեսարաններն էլ գեղեցիկ և զուարճալի է, երբ տոցա լուսամուտներից նայում էք դուրս: Ձեր առաջ ցածր, շատ խորից գոռգոռալով գնում է ջուրը, իր օձապտոյտ ճանապարհով և շուտով անհետանում է փոքրիկ մացառների մէջ ժայռերի ետևը:

Դէմ յանդիման բարձր ժայռեր են բարձրացած և կազմում են մի անառիկ կիրճ. ալ կողմումն նոյնպէս վազող փոքրիկ գետակ է երևում, տեսնում էք և մի ահագին ժայռ՝ սուր սուր գիրով, յիշում էք արդուշա, որ սա ձեր իջած ճանապարհն է, իսկ ձախ կողմում փոքրիկ տարածութեամբ դաշտանման տարածութեան հետևում է նոյնպէս ժայռ, որոյ վերայ գնթացավազ գիւղն է տեղաւորուած. սոյն բոլորակ յիշեալ դաշտանման հողի վրայ պարտէզներ են, որ մի ժամանակ, տասանից 8 տարու չափ առաջ ձգած է եղել Տաթևացի պետրոս անունով մի վարդապետ, որ իշխանութեան հրամանով հեռանալով, վանքն և նորա հողերն անխնամ մնացել են:

Ընտերութիւնից, վանքի հողերն էլ գիւղացիք իրենց մէջ բաժանել են, այսպէս ծիրանի, ծառերի պտուղներն, առուոյտի արտը, քաղում տանում են, իրենք ևս գիտենալով, որ բնաւին իրաւունք չունեն, բայց անտերութիւնից օգուտ են քաղում:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

ПРЕПОВРО ЦЕНЗОРЪ
№ _____



ԲԱՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ.

Худож.-Лит. Р. Шахбазяцъ въ Тифлисѣ.

Գուցէ եթէ այն վարդապետը մնացած լիներ այստեղ, այժմ կարելի է ասել, որ աւելի ծաղկած վիճակի մէջ կլինէին, թէ՛ վանքը և թէ՛ իւր հողերը, ապացոյց սորան, կարելի է համարել վերոյիշեալ շինութիւնները, որոնց դանները ինքը վարդապետն է շինել, նոյնպէս տաճարի դուռը, նոյնպէս վանքի բակի ծառաստանը, աստիճանները, ճանապարհներ է շինել:

Վանքը դալես է եղել Գնտեվազի սառը աղբիւրի ջուրը, որ ամբողջ ահագին ապառաժ ժայռի միջից է դուրս գալիս, որ միակ ջուրն է—բոլոր Գնտեվազի:

Այս աղբիւրը գտնվում է վանքից կէս վերստ բարձր և Գնտեվազից էլ նոյնքան ցածր—սոցա երկուսի մէջ:

Գիւղացիք իւրեանց անասուններն ամառ և ձմեռ, առաւօտ թէ երեկոյ, պէտք բերեն սոյն աղբիւրից ջրելու, նոյնպէս իրենց համար՝ կժերը ուսերնին միշտ և ամենայն րոպէ քանի քանի տասնեակ աղջկերք և կանայք ջուր են կրում, ամանք ցածրանալով և ամանք բաձրանալով նոյն դժուար ճանապարհի վերայ:

Այս ջուրն է եղել գալիս վանքը, բայց այժմ ոչ, որովհետև նորա ճանապարհն էլ փոխել են գիւղացիք և տարել նրան նոյն ծառաստան տեղը:

Այժմ դիտեցէք վանքը, որ թաղուած է խիտ առ խիտ պտղատու ծառերի մէջ, արևմտեան կողմում գտիլմն է, սրա կամարը բոլորովին խոնարհուած լինելով, դուռն էլ քարերով հիւսել ու ծածկել է, ուստի եկեղեցին մտնելու համար պէտք է հարաւային դրան դիմենք:

Այս դրան կողքին երկու փոքրիկ, դեղեցիկ փո-

պատրաստեամբ խաչաքարեր կան կանգնեցրած, որոց միոյն վրայ կարդացվում է (նս զարդաչս կազմեցի սուրբ խաչս թվ. ՌԻԷ) դէս ու դէն ընկած են մի քանի խաչքարերի նշխարներ:

Եկեղեցիի շինուածիւնը կազմուած է սև սրբատաշ մեծ քարերից, ձևը ուղղանկիւնաձև և մի վայելուչ մեծ կամուղիկէիս, որոյ երեսը նոյնպէս սրբատաշ քարերով սպած է. բայց արդէն տեղ տեղ քանդուել է ու քանդուելու էլ վրայ է, ունի փոքրիկ լուսամուտներ:

Եկեղեցւոյ ներսը մաքուր է պահուած և կանգնեցրած է 4 որմնափակ սիւների վրայ, բեմը բարձր, անշքաս միացած պատարագամատոյց մեծ սեղանով: Յիշեալ Պետրոս վարդապետի օրով տարին աննշան տուրք տուր և երբեմնապէս էլ ցանկութիւն յայտնողների համար պատարագ լինում է եղել, բայց այժմ միայն Աստուածածնի տօնին կատարում է պիւղի քահանան ժողովրդի ստիպմամբ:

Պետրոս վարդապետը, ինչպէս գովում և ասում էին և իւր գործերն էլ կարծես ապացոյցներ են, եթէ միայն այստեղ, գուցէ կարճ ժամանակի մէջ ծավկեալ մի վանք էլ այս աւերակ երկրում աւանդել հնարաւոր լինէր:

Վանքիս շինուածքը վերաբերեալ արձանագրութիւն մը չերևեցաւ, սակայն արևմտեան կողմի մի պրան վերայ մի արձանագրութիւն կայ վերսին նորոգման համար այսպէս, «Ընդհօքն Աստուծոյ «մտածօք հրջանակ պարիսպօք և աւանթօք յԱԱ. յիշատակ հոգւոյ իմոյ և իմ ծնողացն հօրն իմոյ Հովհնսի և մերն խանումին թվ. (ՌՃԽ.) բայց ո՞ր Պետրոս վարդապետն է այս չէ յայտնի:

Պետրոս վարդապետ վերոյին նորոգեցի ս. եկեղեցիս Հանդերձ ժա-



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

Цензурный Комитетъ
№
Цензоръ Тифлисскій



Արիցեսի վանքերի աւերակները № 279.

Լուսանկար Մ. Փաշազեանց.

Типъ лит. Ал. Р. Шакбазяца

Առնանք այժմ, Ղաբաղլու Թրքաւնակ փոքրիկ գիւղը, որ մօտաւորապէս 30 վերստ հեռու է, այս տեղից սկսւում է Ալագեազի ձորը։ Ղաբաղլու գիւղից մինչև Այտասի գիւղը 5 վերստ է դէպի արևմուտք։

Ճանապարհը փոքրիկ անտառոտ ձորով է. և կարելի է զուարճալի համարել այն տեղերի վրայ, ինչպէս ճանապարհորդը ծանօթացաւ առհասարակ Դարալագեազու ճանապարհներին, որ միշտ սար, ձոր, ել և էջ—ներ են, այն էլ քարքարոտ և ամայի, սոցա վրայ եթէ աւելացնենք արեգակի կիզիչ ճառագայթները, որ ճանապարհորդի գլուխը ցնցում է բոլորովին ու արբածի նման վայր է ձգում։

Դայց դարձեալ այս ձորով գնալու ժամանակն էլ, զուարճալիքը մէկից կորչում է, որովհետև ճանապարհը դէպի աջ թեքւում է մտնելով կրկին մի ձորի մէջ, ուր վազում է փոքրիկ մի գետակ, սոյն ձորի և գետակի հողէ՛ց գարձնել բարձրանում Այտասի գիւղումն է Ալրատեսի վանքը։

4 վերստ ճանապարհ գնալով վերջապէս հասնում ենք այն տեղ, ուր ձորը վերջանում է և նորան կազմող ժայռերը միմեանց կցուելով, կազմում են բոլորաձև մի հովիտ. մէջ տեղում գտնւում է 45 տներից բաղկացած Թուրքը Այտասի գիւղը, և ոչ քան Ս. Ջալալեանցի այսոէ՛ այնտեղ անունով գիւղ կամ մի տեղ բնաւ չեն յիշում Թուրքերը Ալայոց ձորի մէջ, իսկ Ս. Ջալալեանցը ինչպէ՛ս և ուսկի՛ց է առել այդ անունը չենք իմանում։

Հինց գիւղի մէջին բարձրաւանդակ տեղում կառուցուած են սոյն Հայաբնակ մենաստանը—Ալրիտեսի կամ Ալրատեսի եկեղեցիները, բայց ափսոս, որ Հայմարեայ բոլորովին կործանուած է, հինց այս մօտիկ ժամանակիս եկած հեղեղն էլ եկեղեցւոյ մինչև առաստաղը քանդել է. սոյն հռչակաւոր մենաստանը երկու երեք եկեղեցիներից է բաղկացած. առաջինը ունի ընդարձակ գաւիթ, սրբատաշ քարէ առաստաղով, ամրացած ութ որմնափակ սրբատաշ սիւների վրայ, որոնք կամարաձև միանում են իրար հետ առաստաղի կենդրոնում, ուր կազմում են գեղեցկաքանդակ վայելչաձև քարերի դասաւորու-

թեամբ և մի արշին լայնութեամբ քառակուսի լուսամուտ, իսկ առաստաղի չորս անկիւնները կազմած են իրար մէջ հիւսուած (մօզայիկ) կարմիր և դեղին գոյնի քարերից, որոյ վրայ է շինած փառահեղ զանգակատունն, բայց այժմ ի հարկէ չկայ և խոնարհուած է, ն ինպէս սոյն գաւթի հիւսիսային և հարաւային պատերն էլ բոլորովին կործանուած, միայն կամարակապ սրբատաշ քարէ առաստաղը և սիւներն են մնացած, որ աչքի է ընկնում երբ դիւղը մտնում էք ու վանքին մօտենում:

Գաւթի արևմտեան դրան ճակատում կայ մի քանդակուած նկար, ուր է Մարիամ Աստուածածինը, իւր գրկում ունենալով Յիսուսը· Յիսուսի դլխին է թագ, իսկ սոցա երկու կողմերում կանգնած են երկու անձինք, չէ հասկացվում թէ ովքեր են, բայց Ս· Ղալալեանցը Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամն լինել կկարծէ:

Սոյն գաւթից ներս մտնելով աջ կողմի Ս· եկեղեցին ենք մտնում, որ չորս որմնափակ սիւների վրայ է հաստատուած սրբատաշ քարերից, բայց տարաբաղդաբար սորան ևս առաստաղը և հարաւային պատը խոնարհուած են բոլորովին, բեմի վրայ վեմ քարը դեռ կանգուն է· երկու խորաններ կան մի մի փոքրիկ բեմով: Սորա հարաւային պատի վրայ արտաքին կողմից քանդակուած կայ արեգական կիսաբոլորակ ժամացոյցը 12 շառաւիղով և սոցա իւրաքանչիւրի ծայրին հայկական տառեր Ը· Ւ· Գ· Դ· ևլն· մինչև ԺԲ:


Սոյն Ս· եկեղեցւոյ կից կայ մի կամարակապ քառանկիւնի սենեակ սրբատաշ քարերից, միջումը դէպի արևելեան կողմն երկու խորաններ, փոքրիկ բոլորակի լուսամուտներով, սոքա ևս ունի փոքրիկ սեղաններ վեմ քարերով, սրանց առաջի եղած սենեակը համարելով սոցա գաւիթ, որոյ միջի կողմում պատերի վրայ կան մի քանի արձանագրութիւններ նուիրատուութեանց մնամակցողների և են անթուական· միայն նշանաւոր է Սիւնեաց Ս· եպիսկոպոսի արձանագրութիւնը, որ հարաւային պատի վրայ գրած է:

Սոյն շինութեան հիւսիսային կողմով մի դուռ

կայ, որ տանում է մի այլ եկեղեցի, որոյ առաջ տաղը թէև կայ ողջ բայց տանիքը խախտուած է և շուտով փուլ կգայ։ եկեղեցւոյ անկիւնները մի մի փոքրիկ պահարաններ կան մի մի խորաններով, մեծ աւագ սեղանը իւր բեմով և վեմ քարով դեռ մնում է, նոյնպէս սեղանի կամարն էլ, սա ևս սրբատաշ քարերով է շինած։

Ուրեմն Ղրատեաի վանքը ինչպէս տեսանք միմեանց կից երեք եկեղեցիներից է բաղկացած ունենալով իւր մէջ ինն խորաններ և մի կամարակապ փառաւոր ընդարձակ դահլիճ, հարաւային եկեղեցւոյ արևմտեան դրան հարաւային կողմն էլ ընդարձակ արձանագրութիւն կայ, որ գարձեալ առանց թուականի է։ Հայկական 750 թուականներում և գուցէ սորանից էլ առաջ կարելի է ասել սորա շինութիւնն, եթէ հաւատ ընծայենք այն խաչաքարի թուականին, որ կրում է իւր վրայ հայկական ՆԻԴ։ (424) թուերը, որ հապցրած է երկու եկեղեցեաց մէջ տեղը գտնուած փոքրիկ պահարանների արևելեան պատի վրայ։

Մենաստանիս շուրջը կայ և հանգստարան, որոյ տապանաքարերը մեծ մասամբ արձանագրութեամբ և նկարներով են զարդարած. մանաւանդ միմը՝ շատ նշանաւոր է իւր խոշոր գեղեցկատեսիլ և ջքեղ տառերով, և շատ զարմանալի, որ այնքան տարի ամբողջութեամբ և մաքուր մնացել է, այս արձանագրութեան տառերի երկարութիւնը 5 վերշոք է և այն ժամանակները ունեցել ենք եղել այդ



պէսատառերից, որոց ձևը այս է. տապանաքարն էլ օրօցաձև և գոնվում է հարաւային եկեղեցւոյ արևելեան պատի առաջը, առաջին քարը, վրան գրած նոյն տառերով այսպէս «ղերջանիկ բարեպաշտան Հայրապետս Նորոգողն այսմ ուխտի» Հիշեցէք Թվ. (21Թ.)։

Գիւղի մէջ կայ եկեղեցիներից 200 քայլաչափ հեռի երկու սիրուն փորագրուած խաչքարեր իւրեանց բարձր պատուանդաններով կանգնեցրած, որոյ միմն ընկած է գետին, իսկ միւսը հաստատուն մնացած։



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

Цензурно дозволено
№
Печать разрешаетъ



Դիտնեի վանք № 280.

Լուսանկար Մ. Փափազեանց.

Тифлисъ, Лит. Р. Шахбазянца

ԳԻՒՆԷԻ ՎԱՆՔ № 280

Ա յստաի գիւղի հարաւային կողմից յետ դառնալով իջնում ենք կրկին Ալագեազի անտառային ձորը, և գետերով 4 վերստ գնալով կհասնենք Գիւնէյի վանք անունով թրքաբնակ փոքրիկ գիւղն, որ իր անունը վանքի անունից առած է:

Վանքը գնալու համար գիւղի վերև արևմտեան կողմից մի ճանապարհ կայ, որ աստիճանաբար բարձրանալով գնում է մինչև թեք սարալանջի վրայ, ուր տեղաւորուած է պարսպապատ մի եկեղեցի, որ Ս. Ղալաեանցը իր գրքում մկրտել է Ս. Քոնի, վանք Գիւղէ անուանում:[1] Պարսպի արևմտեան կողմի մեծ դռնով մտնում ենք ներս:

Եկեղեցուց քիչ ցածր հարաւային կողմում կան փոքրիկ սենեականման բաժանմունքներ թւով 8 հատ, որ ամեն այստեղ ճանապարհորդողներ վանքի շէն ժամանակի ունեցած միաբանութեան սենեակներ են համարել, բայց աւելի հաւանականը այն է՝ ինչպէս տեղային թուրքերն էլ հաստատում են թէ իրանք շինած են այդ շինուածքներն անասուններ պահելու համար, իրաքանչիւր անասունի առանձին տեղ է շինել փլատակ քարերից, և իսկապէս էլ այդ է, որովհետև հիմքերն չեն երևում, գուցէ միաբանների սենեակներ եղած լինին մի այլ տեղ դարձեալ պարսպի մէջ, որ բոլորովին քանդուած լինելուն չէ երևում:

Փոքր հատարակ քարերից շինած պարսպի մէջ ինչպէս ասացինք եկեղեցին է, կառուցած կրաշաղախ, հատարակ քարերից, կամարակապ առաստաղով, սապաշէն:

Գարաւային արտաքին կողմի պատը և լուսամուտները կիսակործան, իսկ արևմտեան և հիւսիսային կողմը ոչ այնքան, տանիքը սալած, բայց քարերը չկան, թափուած են, տեղ տեղ խոտ են

[1] Ս. Քոնի վանք Գիւղէ անուանում։

բուսել, որոնք քաղում են գիւղի ժողովուրդը:

Կան եկեղեցւոյ շուրջը շատ գերեզմանաքարեր, որ խաւերի և քարակոյտերի մէջ թաղուած են, մի քանիները ապատ երևում են, որոնց միոյն վրայ կարելի է տեսնել Ձ՟Ր. (772), թուականը:

Վ՚անքիս ներքին կողմը մի քիչ գժուար է մըտնել, թափուած քարերը գրան մնացքը ծածկած են, իսկ ներսը, յատակը ծածկուած է ոչխարի աղբով, ներքին կողմը եկեղեցւոյն գեռ չէ ծածկուել, սեղանը գեռ կանգուն կայ մնացած. սեղանի երկու կողմից կան մի մի խորան:


Պատերի մէջ այ և ձախ հատուցած են պանաղան տապանաքարեր և խաչաքարեր, անշուշտ հասկացվում է, որ նորոգութիւն է ունեցել եկեղեցին, բայց ոչ թուականներին, ճիշտ չենք կարող տեղեկանալ:

Եկեղեցին կառուցուած է չորս առանձնակի սիւների վրայ, որոց միոյն վրայ պանուած կիսատ մի արձանագրութիւնից հասկացվում է, որ Տարսայիճ իշխանը նորոգում է իւր խոպանի այգին Ս. Գրիգորի տաճարին:

Սորանից տեղեկանում ենք ուրեմն, որ եկեղեցւոյ անունն եղած է Ս. Գրիգոր, ինչպէս և այս հատատում է Ս. Ստեփաննոս արքեպիսկոպոսն Օրբելեան իւր պատմութեան յիսուներրորդ գլխում ընդարձակօրէն, անուանելով սրան Ս՚Հերմոնի վանք յանուն սրբոյն Գրիգորի (այլ ոչ թէ Ս՚Գրգունոյ վանք):

Վ՚անքի մէջ ուրիշ մի այլ նշանաւոր բան չկայ յիշելու. ուստի այսքանով բաւականանալէ վերջ, պէտք է յետ դառնալ կրկին նոյն խիստ գառ ի վայր գժուար ճանապարհով գարձեալ գիւղը:

Ճանապարհին անհնարին է չզովանալ առատ բաւական աղբիւրներից միոյն ջրով:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

ԹՐԳՈՑԻ ԱԶԳ: ՍԱՓԿԻՆ
№
ՄԱՏԵՆԻ ԴՐԱՏԱՐԱՆ



Դօշի վանքերը ալպիսաք 2017 № 281

Լուսանկար Մ. Փափաջեանց։

Тифлисъ, Лит. Р. Шакбазяца

Յետ դառնալով Վիւնէի վանքից և նոյն դիւղի միջով կրկին ճորը, անցնում ենք Ըլագեազ գետի հոսանքի ուղղութեամբ ու ստոր երկու ափը զարդարող գեղեցիկ ծառաստաններով միջով:

Շատ չանցած՝ հասնում ենք Ըլագեազ գիւղը, որ գետի աջակողմեան ափի վրայ գետեղուած է և թրքաբնակ է, հաստատուած է հին աւերակների վրայ և զարդարուած պտղատու ծառերի մի քանի այգիներով:

Գիւղին դեռ չհասած մեր աջ կողմում գանվում է մի աւերակ եկեղեցի, միայն սեղանն և իր կամարն է մնացած, ինչ անուն ունի, երբ է շինուել և կամ ո՞վ է եղել կառուցանողը յայտնի չէ լինում ոչ մի արձանագրութիւն չկայ:

Սորանից դէպի արևմուտք քիչ հեռու նշմարվում է լայնատարած գերեզմանատուն շատ տապանաքարերով, որոնց թիւսականը ըստ արձանագրութեանց հասնում է 700 մինչև 800 հայկական թուականը:

Այս գերեզմանատան մէջ կանգնած է մի սրբատաշ կրամած՝ գմբեթաւոր փոքրիկ եկեղեցի քառակուսի 5 արշինաչափ համահատասարութեամբ, երկու որմնափակ սիւնով և մի բեմով, գմբեթի կամարը ներսից զարդարած է միմիանց յարմարացրած սև և կարմիր քարեայ խաչերով, արտաքին կողմից հարաւային պատի լուսամուտը շրջապատած են երկու շրջանակներ, որոնց վերի քանդակապատ ծայրերը վերջանում են օձանմանն վիշապագլխով, վիշապները միմիանց փաթաթուած և բերանները դէմ առ դէմ բռնած:

Սա ևս չունի արձանագրութիւն ոչ մի տեղումը, եկեղեցին դեռ ևս ամբողջ է, բայց հետզհետէ խոնարհուելու վրայ է:

Այն գերեզմանատան ծայրին, կան միաշար կանգնեցրած 4 հատ խաչ քարինք, մաքուր փորագրութեամբ №273 նկարը. սոցա շուրջն և գերեզմանատան մէջ բոլոր են ցանել տեղային

թուրքերը, իսկ նոյն միաշար խաչաքարերը այժմ ծառայում է նոյն բօստանճոց ապաստարան, միայն վերևից մի ծածկ աւելացրել են խոտերով, որպէս զի արեգակից ազատ մնան:

Գիւղի մէջ կայ նաև լայնանիստ մի հին եկեղեցի առանց գմբեթի, չորս քառանկիւնի սիւների վերայ կանգնած, կապոյտ քարից և կրաշաղախ, ունի երկու դռներ հարաւային և արևմտեան կողմերից. այս եկեղեցին այժմ թուրքերը յարդանոց են շինած:

Ընդեղ գիւղի հիւսիսային կողմից մի ճանապարհ դէպի զառիվեր, տանում է Գ. օշա վանքերը, Յախացքարի աւերակ մենաստանը, ու Սրմբաստայ բերդը:

Նախ մենք ուղղենք մեր ճանապարհը դէպի Գ. օշա վանքերը, որոնց երկու եկեղեցիներից բաղկացած լինելուն պատճառով թուրքերը Գ. օշա վանք են անուանում: բայց իսկական անուններն են Ս. Յովհաննէս և Ս. Կարապետ:

Սկսենք Ս. Յովհաննու վանքից, սա փոքր է և շինած նուրբ սրբատաշ քարից, ունի միակ դուռը, որ և տանում է եկեղեցւոյ գաւիթը, գաւթի վրան կանգնած է մի գմբեթաձև շինուածքն, որոյ միջին կայ փոքրիկ խորան, իսկ եկեղեցւոյ կողքերին կանգնեցրած կան երեք արշինից բարձր մի մի պեղեցկաքանդակ խաչաքար, անթուական և անարձանագիր, խորանի վրայ եղել է չորս բոլորակ սիւների գմբեթ, որ այժմ խոնարհուած է:

Սոյն Ս. Յովհաննու եկեղեցւոյ տանիքը ծածկուած է սրբատաշ սալերով:

Եկեղեցւոյս գաւիթը շատ փոքր է և ունի արևմտեան պատի վրայ ինքնքուստ, հայր Գ. արգկայ արձանագրութիւնը 710 հայկական թուականից. իսկ հարաւային պատի վրայ կայ անթուական արձանագրութիւն ոմն մարտիրոսի, որ սա Եղեգնիսում ունեցած հայրենական հողն նուիրում է սոյն Ս. Յովհաննէսին, իսկ եկեղեցւոյ մէջ չկայ արձանագրութիւն, միայն սորա գեղեցիկ քե-

Ընկեղեցին միակ դուռն ունի հարաւային կողմից, որոյ վերը տեսնւում է մեծ տառերով մի արձանագրութիւն բայց անձրևից և այլ պատճառներից ժաշուել եղծուել է, նշմարելի են լինում միայն այս բառերը ... ՏԷր Ըստուած ողորմեա Վարդայ ի քոմ գալստեանդ և պահա ... սորա տակին կայ մի նկար, ուր որթի ճիւղերը աջ և ձախ միմեանց յարելով դուքնթաթաբար ձգվում են և նորանց կազմած վանդակների մէջ գետեղուած են խաղողի ողկոյզներ, իսկ սորանից ներքև, հայր Վ. արդկայ անթուական արձանագրութիւնը, դրան առաջ կան մի քանի անարձանագիր խաչաքարեր և ցան ու ցիր եղած խաչաքարերի բեկորներ և շինութիւնից թափուած քարերի կոյտեր:

Վանքի առաստաղն ամրացած է չորս նրբատաշ, որմնափակ սիւների վերայ, որոնք վերը միանում են կամարներով, յատակը սալած է և ծածկուած անանոյշ աղբով:

Ընկեղեցին ունի չորս խորան իւրեանց բեմիկով ու վէմ քարերով, երկուսը առաջին և երկուսը յետ

մը և վէմ քարը դեռ ևս ամբողջ մնում են:

Սոյն եկեղեցիից դէպի արևմուտք 50 քայլաչափ հեռու կանգնած է Ս. Կարապետ անունով չքնաղ եկեղեցին, որ գմբեթայարկ է և սրբատաշ կարմրադոյն քարից. արևելեան և արևմտեան լուսամուտների արտաքին շրջանակները զարդարած են ծաղկահիւս նկարներով, իսկ հիւսիսային պատի վրայ քանդակած է բաւականին մեծադիր կատաղի առիւծի պատկեր, որոյ պոչը աղեղնաձև լարուած՝ մէջքի վրայ, առաջի թաթերով սղմել է և կամենում է պատառել ճնշուած ցուլին, հարաւային պատի վրայ դռնից վերև քանդակած կայ մի արծիւ, թևերը բացած և մագիլներում գառը սղմած:

Այս եկեղեցւոյ տանիքի և գմբեթի սալածածկը թէև ըստ մեծի մասին ամբողջ է դեռ ևս, բայց և այնպէս տեղ տեղ թափուել են սալերը, մանաւանդ գմբեթի հարաւային կողմից, սակայն առաստաղը դեռ չէ ծակուել:

մին դասում:

Ըստ սեղանի բեմը բոլորովին անբողջ է և ճաթատի վերայ քանդակած հինգ հատ սափոր, շրջանց մի մասը թեքուած դէպի մի կողմ:

Երկու կողմից աստիճաններ բարձրանում են դէպի բեմը, որոյ վերայ երևում են կրակատեղեր և ածուխի մնացորդներ:

Այն նկարուած երկու վանքերի շուրջը ծածկուած է տապանաքարերով, խաչաքարերի բեկորներով ու պատերից պոկուած քարերի կոյտերով:

Ս. Օրբելեան իւր պատմութեանը մէջ Վայոց ձորի վանքերի շարքումը յիշում է և Ցախաց քարի Ս. Կարապետի մասին այսպէս «Ցախացքար՝ բարձրահռչակ և սուրբ առաքինարան յորում ի 490 Թուականին ի Թագաւորութեան Փագկայ, Հայր ոմն վանից Վարդիկ անուն շինէ պայծառ եկեղեցիս երկու իհանգստարանի առաջին սուրբ Հարցն, զմին գմբեթարկեալ յանուն սրբոյ Կարապետին, և զմիւսն սագաչէն, հրաշալի յօրինուածովք։ Օրբել. պատմ. գլ. ԿԴ:

Օրբելեանի սոյն խոսքերից յայտնի երևում է, որ գմբեթայարկ եկեղեցին կոչվում էր Ս. Կարապետ. իսկ միւս փոքրիկ եկեղեցւոյ անունն էլ՝ Ս. Յովհաննէս՝ յիշվում է նոյն եկեղեցւոյ հարաւային պատի վրայի պահուած ոմն մարտիրոսի արձանագրութիւնից:

Ըստ այսպէս՝ պատմութիւնից և թէ արձանագրութիւններից հասկացւում է, որ Ցախաց քարի Սուրբ Կարապետի և Ս. Յովհաննիսի եկեղեցիների հիմնողը և առաջին առաջնորդը եղել է 490 Հայկական թուականին ոմն Հայր Վարդիկ, յետոյ նորոգութիւն ունեցել է, դարձեալ Հայր Վարդիկ անուն անձէ մը 710 թուականին. Նուիրատուութիւն է լինում Տարսայիճ իշխանի կողմից, որ նոյնպէս Օրբել. պատմ. ԿՉ. գլխում դրած է (ես Տարսայիճ և ի վանսն Ցախացքարոյ գիւղ ի գեղարքունիս զգաւառս-կէրն և այգի մի ի Մաճառակայ ձորի և գրէ ինքեան արձան ի վերայ սրբոյ Կարապետին):



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՐՀԵՍՏՈՑ
№
ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀՈՒՅԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ։

Тифлисъ, Лит. Р. Шахбазянца

ՅԱԽԱՑ ՔԱՐԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ № 294

Հօշա վանքից դէպի արեւմուտք մօտ 500 քայլաչափ հեռի կհանդիպենք սուրբ Աստուածածնի աւերակ եկեղեցւոյն:

Նախ երեւում է մի երկայն պարիսպ եկեղեցւոյ արեւելեան կողմում, որոյ հարաւային ծայրի մօտ արբատաշ կամարակապ մեծ դարպասն է, դարպասի կամարի վրայ ունեցել է փոքրիկ խորան կոփածոյ քարից, այժմ խոնարհուած, մի և նոյն դարպասի պատուանդանի հիւսիսային պատի ճակատը ծածկուած է արձանագրութեամբ, թէ և չկայ Թուական եկեղեցւոյ հիմնարկութեան տարին մեզ յայտնի անելու· բայց և այնպէս դարպասի պատուանդանի արտաքին կողմի արձանագրութիւնը, մեզ ցոյց է տալիս եկեղեցւոյն յանուն Ս· Աստուածածնայ կառուցուած լինելը, և նորոգութիւն ունենալը, ումն Գրիգորի ձեռամբ, Հայկական 671 Թուականին:

Նոյն դարպասի հիւսիսային պատի վրա դարձեալ մի ամանագրութիւն երեւում է, 766 Թուականից Պռօշ իշխանի Թոռ Նչէի կողմից այսպէս . . .

Կամաւն Աստուծոյ ես Նչէի որդի և Թոռն Պռօշայ միաբանեցայ սուրբ ուխտիս Յախաց քարս և ետու իմ հայրենեաց ի Որկղունս զմեր ձեռատունկ այգին նորա կեր իւր ջրովն մեր եղբայրն Աւրպելի ովանիս միաբանքն ի տարին սահմանեցին գ· պատարագ մեր զմեր ծնողաց մերոց և ամուսնոյն իմոյ մամա խաթունին ի տեառն Դաւթի և Յակոբա Ո·· բակատարիչքն աւրհնին յաստուածոյ Թվ· ՉՒԶ· (766)·

Դարպասից ներս մտնելիս, ամէն ձախ կանգնած են մի մի եկեղեցի· հարաւային կողմում գտնվում են միաբանների սենեակները, որ այժմ Թուքերը մասամբ կարկատելով բաւականին կարգի բերած են և բաւական Թուով ուխտաւորներ պահելու տեղ են շինել: Դարպասի հիւսիսային կողմում երեք երեք կամարափակ սիւների վրայ կամարակապ առաստաղով շինուածքը եկեղեցի է, որ ունի մի սեղան

իւր վեմ քարով, որա յատակը ծածկուած է ձիու և ոչխարի կեղտոտութիւնով, որովհետև այս տեղ էլ Ընտեսը պիտի թուրքերը պահում են իրենց հօտերը:

Որա հիւսիսային պատին կպած է մի՝ սպաշէն կամարակապ եկեղեցի, չորս որմնափակ սիւների վրայ, առաստաղը խոնարհուած, ունի չորս խորան պատարագ մատուցանելու, երկու առաջին և երկու յետին դասում. եկեղեցւոյ հարաւային դուռը բացուում է դէպի յիշեալ շինութիւնը, իսկ արևմտեանը դէպի լայնանիստ՝ նոյնպէս կամարակապ և ընդարձակ, չորս միաշար սիւների վերայ կամարով կառուցած պատիճը, որի առաստաղը բոլորովին խոնարհուած է:

Նոյն դարպասի հարաւային պատին կպած է, մի այլ բարձրակամար սպաշէն եկեղեցի, չորս որմնափակ սիւների վերայ, որի կամարաձև առաստաղը նոյնպէս խոնարհուած է բոլորովին:

Այն բոլոր շինութիւնները բացի դարպասից, կառուցուած են հասարակ կոպտատաշ քարերից և կրաշաղախ:


Եկեղեցեաց շուրջը կան և երևում են և այլ շինութեանց և տների աւերակներ, կրապատ հոտեր և այն. որ ընկած է մեծ մասամբ եկեղեցու հիւսիսային պատից դուրս, և նաև արևմտեան կողմերում, թուրքերի հօտերը երբեմն եկեղեցեաց մէջ չեն տեղաւորում, որ բաւականին ոչխարներ էլ այստեղ են պահում:

Մենք թողնենք այս սրտաճմլիկ աւերակների տեսարանները այս հիասքանչ բարձրաւանդակում, և ուղղուենք քարքարոտ ճանապարհաւ դէպի հարաւ, Ընտեսի հոյակապ բերդը տեսնելու:



Лит. Шахбазянцъ Тифлисъ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
№ _____
ՄԱՏԵՆԱԳԻՏԱՐԱՆ



ՊՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ.

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

83356



Ախաց քարի աւերակներից յետ դառնալով մեր ճանապարհին հանդիպում ենք, լերան ուռուցիկ մէջքի վրայ մի յորդառատ աղբիւրի հոսանքի, որ թէքւում է երբեմն դէպի Ալապեազ և երբեմն դէպի Էրատափին, հէնց այդ տեղ, նշմարվում է մի կիսակործան հասոտհիմն պարապատառ, որ յենուած իւր արևելեան կողմի բուրգերի վերայ, ձգւում է հիւսիսից հարաւ:

Դա նման է մի պատնէշի, որ փակում է ճանապարհի անց ու դարձը:

Հէնց այս պատնէշից սկսում է բերդի բլուրը, որ ուղղի սապատողի նման դէպի վեր բարձրացած է, մի ահագին լեռնային պօտի է հիւսիսից դէպի հարաւ ուղղութեամբ:

Միակ ճանապարհն, որով կարելի է մտնել բերդը՝ բլուրի հիւսիսային կողմումն է:

Նոյն իսկ այդ ճանապարհն է, որ հին ժամանակներում ծառայել է բերդին աստիճանաբար բարձրանում է վիմաշէն բուրգերի ձախ ափից, ապա բերդատարի հիւսիսային մասի արևմտեան լանջով, մացառների միջից մօտենում է բերդին:

Հին ճանապարհը այստեղ դեռ ևս չէ կորցրել իւր հետքն, որ աւելի որոշ է բերդի մօտ:

Եւ որովհետև Ալապեազի այդ բերդի արևելեան, հարաւային և արևմտեան լանջերը ամրացած են անմատչելի ուղղահայեաց ցից ժայռերով, և որոյ մատչելի ու թոյլ կողմերն են հիւսիսային, հիւսիս—արևելեան և հիւսիս արևմտեան մասերը, հէնց այս թոյլ կողմերն էլ պաշտպանուած են հաստհիմն քարակառոյց կրաշաղախ պատերով, որոնց հիւսիս արևելեան անկիւնը արդէն քանդուած է:

Հիւսիսային պատի հաստութիւնը կլինի աւելի քան երկու սաժէն, իսկ միւս պատերի հաստութիւնը մի սաժէն:

Այդ աղեղնաձև պարիսպը, ամրացած է արուա-
քուստ տասն մեծ աշտարակներով։

Ներդը ունի երեք կամարաշէն մեծ դարպաս-
ներ, արեւառաշ քարից՝ արեւելեան, հիւսիսային և
հիւսիս—արեւմտեան կողմերից, ամենից լայն և
մեծն է հիւսիսայինը, որ պէտք է իւր ժամանակ
լիներ աւագ դուռն, որի առաջ կան արդէն քան-
դուած քարէ աստիճաններ։

Մենք մեր ճանապարհով մտանում ենք ներդի
հիւսիսային մեծ դրան, որոյ քանդուած քարէ
աստիճանները ճանկրելով և ուղեցոյցներիս օգ-
նութեամբ բարձրանալով, մտնում ենք ներդի ներսը։

Երբ ուղ ենք գնում դարպասից ներս՝ աչքի
առաջ արձանանում են ամայի լեռնապատարի, սե-
պաձև ժայռեր, սենեակների փլատակներ, և խիտ
առ խիտ քարակոյտեր. անմիջապէս համոզվում
էք, թէ ինչ է եղել հինգ կամ վեց դար առաջ
այն՝ ինչ որ այժմ չկայ. այն դարի ժողովուրդը
թողել է մեզ միայն ներկայ փլատակներն և քա-
րակոյտները։

Յիշեալ սենեակները քարաշէն են և ցնաշա-
ղաղ ու դասաւորուած են պարսպներին կից և
սոցա երկարութեամբ, սոքա բոլորն էլ խոնար-
հուած են, և են մեծ մասամբ առանձնակի, բայց
կան և այնպիսիք էլ, որ երկու կամ երեք սե-
նեակներ ունեցել են միմեանց հետ հաղորդակցու-
թիւն։

Այժմ նշմարելի բոլոր սենեակների թիւն առա-
ւել է քան 120։

Ներդի կեդրոնում, մի բարձր ժայռի գլխին կան
չորս միմեանց կից կրապատ սենեակներ, որոնք
գուցէ իշխանների համար են, սոցա մօտ կայ և
մի կրապատ ջրամբար։

Այս սենեակներից ոչ հեռի, դէպի հիւսիս, մի

սուր ժայռի ծայրում կանգնած է երեք պատով մի աննեակ, առանց չորրորդ՝ հիւսիսային պատի, դուցէ սա դիտանոց եղած լինի, ըստ որում այս տեղից նայելով՝ կարելի է մի ակնթարթում գննել բերդաստարի արևմտեան և հիւսիսային մասերը, սոցա բոլոր լանջերով և ստորոտներով ու այնքան պարզ, որ ոչ ինչ թաքչել չէ կարող:

Ահա յիշեալ մասերն են թոյլ և մատչելի թշնամեաց համար:

Բերդի մէջ կանգնած ժամանակ, մարդուս աչքին ներկայանում են չորս կողմում դեղեցիկ տեսարաններ, երևում են հեռուում Դարալագեազի ալեծածան գոտիները, սեպաձև ժայռերը և ստկալի ձորերը, և առաւել մօտիկ դէպի հիւսիս, բերդից աւելի բարձր դիրքի վրայ երևում են Ղօշա վանքերը, իւրեանց սրածայր կամուղեկներով:

Եթէ նայենք դէպի արևելք՝ մեր առաջ խորը, անդունդի մէջ, ընկած ենք տեսնում Ալագեազի ձորը նոյնանուն գետով, որա աջ ափում մինչև բերդի ստորոտը, ցանուցիր թափթփած են ահռելի քարակոյտեր, որ Ալագեազ—հին Եղեգնիսի տների աւերակներն են, սոյն աւերակներից փոքր ինչ վերև, նոյն ձորում, գետեղուած է այժմեան Ալագեազ գիւղը իւր ծառերով, այգիներով և հին վանքերով:

Դայց մենք չենք բաւականանալ այս դեղեցիկ տեսարանները դիտելով, և պէտք է շտապել վայր իջնել քանի մութը չէ ընկել, և հանգստանալ փոքր ինչ գիւղի մէջ, որպէսզի հին Եղեգնիսի աւերակները գննելէ յետոյ, կարողանանք գնալ հնչակաւոր Շատինու վանքերը տեսնելու:

Իջանք գիւղը, փոքր ինչ հանգստանալէ վերջ, դարձեալ շարունակելով մեր ճանապարհը նոյն գետի հոսանքով և այգիների միջով դէպի հասանի

պեղը· բայց ինչ է այս· այդիների մէջ ծառերի առուերում մի ինչ որ արձան նշմարվում է, Տարցնում եմ ուղեցոյցիս, պատասխանում է ինձ, թէ է ածպան էէր պէր (Հին սուրբ է), իմ ձիուց, տեսնեմ վեց արշնաչափ բարձրութեամբ մի խաչաքար արձան, գեղեցիկ քանդակագործ շրջանակով, որի մէջ տեղը խաչն է քանդակուած, տես նկար№—281— բայց ափսոս, որ թէ անձրևից և թէ այլ պատճառներից, — գուցէ պիղծ ձեռքերից, ոչնչացել է, խաչի վերևը կիսաբոլոր քարի վրայ քանդակուած է Մարիամ Աստուածածնայ պատկերը գահի վրայ նստած, երկու կողքին կանգնած են Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամն:

Փորագրեալ շրջանակի լուսանցքում բոլորակի պրուած է մի արձանագրութիւն, որ տեղ տեղ քանդուած և շատ խրթին ու դժուարընթեռնելի լինելուն չկարողացանք ձիշտ դուրս բերել:

Արձանի շինութիւնը մնքուր սրբատաշ մեծ քարերով է կազմուած:

Վեց արշին երկարութեան հետ միասին երկու արշին էլ յայնութիւն ունի, նկարը արևմտեան ճակատին է· իսկ երեք կողմերը ոչինչ չկայ· սա, ալապեազ դիւղի մի թուրքի այգումն է, սոյն արձանի մասին տեղեկութիւն ոչ մի տեղ չենք հանդիպած, ուստի նկարը վերցնելու արժան համարեցինք և դնեղել մեր սոյն գրքի մէջ ի շարս հնութեանց և ի տեղեկութիւն հնասիրաց:

Թողնելով հին Նղեգնիսի աւերակները, Շատու հռչակաւոր վանքերը և այլ աւերակների նկարներն ու տեղեկութիւնները մեր յաջորդ գրքին:


Սրանով վերջ ենք տալիս մեր Գ-րդ տետրին, յոյս տածելով, որ մեր բանասէր և հայրենասէր ազգայինք միջոց կտան մեզ ամբողջացնելու մեր գործը առաջիկայ գրքերի հրատարակութեամբ:




Лит. Шахбазянцъ Тифлисъ.

ԱՐՀԵՍՏԻ ԱԶԳԱՅԻՆ
№
ԱՆՀԱՏՈՑ ՖՈՏՈՐԴԻՆ


Խմբագրական կոմիտեի հրատարակութիւն.
Ղազաք-Ղրղ Ք Աղբերական ՏՊ Երևան.





Лит. Шахбазянцъ Тифлисъ.

Գրադարան
Ազգ. Ս. Բ.



Типолитография М.Р. Шахбазяна

20 05
2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0683717